AZG NEW PDF.qxd 22/04/2010 23:03 Page 1


# Ազգ
Azg

23 ԱՊՐԻԼ 2010 ՈՒՐԲԱԹ 73 (4453)

ISSN: 1829-1651


## Ցեղասպանության ճանաչման նոր նախաձեռնություն Իտալիայի Սենատում

Իտալիայում ընդդիմադիր Դեմոկրատական կուսակցության սենատոր տկն **Ալբերտինա Սոլիանին** հայտարարել է, որ Իտալիայի Սենատը պետք է ճանաչի հայերի Ցեղասպանությունը: Ինչպես երեկ տեղեկացրել է կիսապաշտոնական «Անադոլու» գործակալությունը, սենատոր Սոլիանին ելույթ է ունեցել Սենատում, հիշեցրել է Մեծ եղեռնի 95-րդ տարելիցի մասին, որն այս տարի ապրիլի 24-ին լրանում է, ապա եւ ավելացրել. «Իբրեւ Իտալիա-Հայաստան միջխորհրդարանական բարեկամության խմբի ներկայացուցիչ՝ կոչ եմ անում իմ գործընկերներին Հայաստանի Հանրապետության եւ Իտալիայի հայ համայնքի հետ հիշել այդ ողբերգությունը: Համոզված եմ, որ այս ողբերգության ճանաչումը որպես Ցեղասպանություն՝ հիմք կհանդիսանա Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ նոր ու մնայուն համագործակցության հաստատման համար»:

Դեմոկրատական կուսակցության մեկ այլ սենատոր՝ **Մարկո Պերդուկան**, որը միաժամանակ «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության» քաղաքացի է նաեւ, հանդես գալով իբրեւ Թուրքիայի եւ Հայաստանի բարեկամ, ասել է, որ պատմական խնդիրները խորհրդարանի որոշումներով չեն լուծվում: Իսկ վարչապետ Սիլվիո Բեռլուսկոնիի կառավարող կուսակցության սենատոր **Պաոլո Ամատոն** ավելացրել է. «Նույնիսկ Եվրոմիությունը անդամակցության համար Թուրքիայից Հայոց ցեղասպանության ճանաչման պահանջ չի ներկայացնում»:

Ի դեպ 2000-ի նոյեմբերի 17-ին Իտալիայի խորհրդարանի Ներկայացուցիչների պալատը 1915-ի իրադարձությունները բնութագրել է որպես Ցեղասպանություն եւ ճանաչել հայերի ցեղասպանությունը, որին բուռն հակազդեցությամբ արձագանքել էր Թուրքիան:

Հ. Չ.

## Սերժ Սարգսյան. Դուրս չգալով գործընթացից՝ Հայաստանը կասեցրեց արձանագրությունների վավերացման ընթացակարգը

Հայ-թուրքական արձանագրությունները տեւական ժամանակ Հայաստանի եւ Թուրքիայի խորհրդարաններում են՝ սպասելով վավերացման, ինչում Հայաստանը ի ցույց է դրել հետեւողական նվիրվածություն՝ հասնելով մինչեւ արձանագրությունները Ազգային Ժողովի օրակարգում ընդգրկելը: Երեկ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն իր հեռուստաուղերձով հայտարարեց, որ եկել է «ողջամիտ ժամկետներում» եւ «առանց նախապայմանների» գործելաոճը գնահատելու ժամանակը այն դեպքում, երբ այդ ժամկետներն ավարտվել են:



«Մեկ տարի շարունակ Թուրքիան ամեն ինչ արել է ժամանակ ձգելու եւ գործընթացը տապալելու համար: Հետեւաբար մեր եզրակացությունն ու դիրքորոշումն էլ միանշանակ են. Թուրքիան պատրաստ չէ սկսված գործընթացը շարունակել եւ առանց նախապայմանների, արձանագրությունների տառին համապատասխան քայլերով առաջ շարժվել», ասաց նախագահը:

Հարաբերությունների կարգավորման ներկա փուլը համարելով սպառված՝ Սերժ Սարգսյանը տեղեկացրեց, որ հայ-թուրքական գործընթացի առնչությամբ Ֆրանսիայի, ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի նախագահների, ինչպես նաեւ եվրոպական մի շարք կառույցների գործընկերների հետ քննարկումներում վերջիններս հորդորել են Հայաստանին շարունակել գործընթացը, չկանգնեցնել: «Հարգելով նրանց, նրանց ջանքերն ու անկեղծ ցանկությունները, կոալիցիոն գործընկերների հետ եւ Անվտանգության խորհրդում քննարկումներից հետո, մենք վճռել ենք առայժմ դուրս չգալ գործընթացից, այլ միայն կասեցնել արձանագրությունների վավերացման ընթացակարգը»:

Հայաստանը կպահպանի արձանագրությունների տակ իր ստորագրությունը, քանի որ, ըստ Հայաստանի նախագահի, ցանկանում է պահպանել հարաբերությունների կարգավորման հնարավորությունները եւ ցանկանում է խաղաղություն: «Հայաստան-Թուրքիա հարաբերությունները կարգավորելու մեր քաղաքական նպատակները մնում են ուժի մեջ, եւ մենք կդիտարկենք առաջ շարժվելու հարցը, երբ համոզվենք, որ Թուրքիայում կա համապատասխան մթնոլորտ եւ երբ Անկարայում կտեսնենք հարաբերությունների կարգավորմանը վերստին պատրաստ առաջնորդություն»:

Անդրադառնալով ապրիլի 24-ին՝ Սերժ Սարգսյանը նշեց, որ թեեւ ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանությունը խորհրդանշող օր է, բայց որեւէ կերպ չի սահմանափակում դրա միջազգային ճանաչման ժամանակացույցը: Հայաստանի նախագահը, շնորհակալություն հայտնելով Ցեղասպանության հարցում Հայաստանին աջակցած երկրներին, կառույցներին ու անհատներին՝ կոչ արեց հիշել, որ «պետական մակարդակով մշակված ծրագրով եւ միայն հայ լինելու համար հրի ու սրի մատնված 1.5 միլիոն անմեղ զոհերի հիշատակը ողջ մարդկության առջեւ դեռ շարունակում է ճանաչման ու դատապարտման պահանջ դնել»:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*(Սերժ Սարգսյանի ուղերձի ամբողջությունը՝ մեր կայքէջում)*

## Համանախագահները հանդես են եկել հայտարարությամբ

Երեկ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Յուրի Մերզլյակովը (Ռուսաստանի Դաշնություն), Բեռնար Ֆասիեն (Ֆրանսիա) եւ Ռոբերտ Բրադկեն (Ամերիկայի Միացյալ Նահանգներ), ինչպես նաեւ ռուսաստանցի նոր համանախագահ Իգոր Պոպովը հանդիպել են Մոսկվայում եւ հայտարարություն են տարածել: Հայտարարության մեջ նշվում է, որ նրանք Մոսկվայում քննարկել են վերջին զարգացումները, այդ թվում՝ Վաշինգտոնում, Բաքվում եւ Մոսկվայում տեղի ունեցած բարձր մակարդակի հանդիպումները:

«Համանախագահների կարծիքով՝ այդ հանդիպումները նոր լիցք են հաղորդում ԼՂ հակամարտության խաղաղ կարգավորման առաջընթացին՝ մադրիդյան սկզբունքների հիման վրա: Մայիսի սկզբին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները կմեկնեն Վիեննա՝ Մինսկի խմբին տարածաշրջան վերջին այցի մասին տեղեկություններ հաղորդելու համար», ասված է հայտարարության մեջ:

## Իրան-Հայաստան. Դիպլոմների ճանաչում

Երեկ ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը ընդունել է Հայաստանում Իրանի դեսպան Սեյիդ Ալի Սաղայիանին: Քննարկվել են բուհերի դիպլոմները փոխադարձ ճանաչելու հարցերը, որին ավելի հանգամանորեն անդրադարձ կարվի Աշոտյանի՝ Իրան նախատեսվող այցի ժամանակ: Վերջինիս Սաղայիանը փոխանցել է Իրանի գիտության եւ տեխնոլոգիայի նախարարի Իրան այցելելու հրավերը:

Վերջին շրջանում մեր բուհական կրթության որակից Իրանից հնչող որոշ դժգոհությունների վերաբերյալ Աշոտյանը դեսպանին վստահեցրել է, որ խստացվել են կրթության որակի վերահսկողության մեխանիզմները:

## Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

Համարի թողարկման օրը՝ Ապրիլի 24-ը կանխանշում է էջերի բովանդակությունը. հավելվածը նվիրված է Հայոց մեծ եղեռնի 95-րդ տարելիցին:

Ապրիլի 24-ի խորհուրդը. Երվանդ Օտյանը՝ Օրը ազգային տոն հռչակելու գաղափարի ակունքներում:

Ցեղասպանության հիշողությունների վավերական պատմության երկու հրապարակում. Վերժինե Սվազլյանի՝ տպագրվելիք եռալեզու հուշ-վկայությունների գրքից հատված Չուգասզյան գերդաստանի վերածննդի ոդիսականի մասին: Հրապարակագիր Մարգո Ղուկասյանի «Անվերնագիր-1915-ի» անավարտ գրության «Դեպի անհայտություն» մասը՝ Դեր Զորի անապատներից հրաշքով փրկված Ալմաստ մայրիկի կյանքի պատմությունից:

Հաջորդ էջերում ներկայացված են Ցեղասպանության անդրադարձները հայ արվեստում. գրականություն, նկարչություն, երաժշտություն՝ ըստ Երվանդ Տեր-Խաչատրյանի, Շահեն Խաչատրյանի, Սվետլանա Սարգսյանի:

Մ. Բ.

## Հայաստանում կառավարող կուսակցությունների հայտարարությանն արձագանքում է վարչապետ Էրդողանը

**ՀՀ Ազգային ժողովում կառավարող կոալիցիայի անդամ կուսակցությունների հայ-թուրքական արձանագրություններին առնչվող երեկվա հայտարարությանն (տես՝ 2-րդ էջում) արեւմտյան լրատվամիջոցներից հետո, որպես թեժ լուր, նույն օրը կայքէջերում արձագանքեցին նաեւ թուրքական թերթերը, այդ թվում՝ Թուրքիայի վարչապետը, արտգործնախարարությունը, արտգործնախարարն ու Թուրքիայում ԱՄՆ դեսպանությունը:**

**«Ռադիկալ» թերթի վկայությամբ, վարչապետ Էրդողանն ասել է. «Կառավարող կոալիցիայի այս հայտարարությունը գրանցել եւ մի կողմ ենք դրել: Վավերացման գործընթացի ուղղորդումն իրենց իրավասությունն է: Ես չեմ կարող ասել, թե ինչպես վարվեն: Մենք շարունակելու ենք աշխատել միջազգային նորմերին համապատասխան պարտավորվածություններին հավասարմության սկզբունքի շրջանակում: Վավերացման գործընթացի նկատմամբ մեր մոտեցումը հայտնի է: Չեմ կարծում, թե այս կարգի հայտարարությունները քաղաքական առաջնորդների, հատկապես ԱՄՆ-ի նախագահի վրա ազդելու ուժ ունենան»:**

**Արտգործնախարարության խոսնակ Օզուգերգինն ավելացրել է. «Մեզ դեռեւս որեւէ տեղեկություն չի հասել: Ըմբռնման, իմաստի եւ բովանդակության առումով վերլուծում ենք հայտարարությունը եւ որոշում հետագա հնարավոր քայլերը»: Միաժամանակ արտգործնախարար Դավութօղլուն Էստոնիայից հեռախոսակապ է հաստատել եւ հարցի առնչությամբ պարզաբանումներ է արել Էրդողանին: Իսկ Մեջլիսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Մերջանը նշել է, որ Թուրքիան չպետք է շտապողութ որոշումներ կայացնի, այլ հայտարարությանը մոտենա առողջ դատողությամբ:**

**Այդ ընթացքում Անկարայում ամերիկյան դեսպանատան խոսնակ Գուիդոն ընդգծել է. «Ներկա պահին մեկնաբանություն չենք անելու, պարզապես մենք պաշտպանել եւ պաշտպանում ենք Թուրքիայի հետ Հայաստանի հարաբերությունների նորմալացման գործընթացը»: Ըստ դիվանագիտական աղբյուրների, ԱՄՆ-ը նախքան Հայաստանում կառավարող կուսակցությունների հայտարարությանն արձագանքելը, սպասում է տեսնել, թե ինչ հակազդեցություն կցուցաբերի Անկարան:**

Հ. Չ.

## Ներկայացուցիչների պալատի խոսնակը նույնպես պատրաստակամ է՝ ճանաչելու Հայոց ցեղասպանությունը

«Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը մարտահրավեր է Ամերիկայի խղճին», հայտարարել է ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի խոսնակ **Նենսի Փելոսին**՝ չորեքշաբթի օրը ելույթ ունենալով Կոնգրեսի շենքում կազմակերպված Ցեղասպանության հիշատակի արարողությանը: Վաշինգտոնի Հայ դատի գրասենյակի տեղեկացմամբ՝ արարողությանը մասնակցել են նաեւ Ներկայացուցիչների պալատում դեմոկրատ մեծամասնության ղեկավար Սթեյնի Հոյերը, պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Հովարդ Բերմանը, հայկական 252-րդ բանաձեւի հեղինակ Ադամ Շիֆը, այլ օրենսդիրներ՝ Կալիֆոռնիան ներկայացնող Ջեքի Սփայերը, Աննա Էշուն, Հայ առաքելական եկեղեցու բարձրաստիճան հոգեւորականներ, ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Թաթուլ Մարգարյանը եւ Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչ Ռոբերտ Ավետիսյանը:

Նենսի Փելոսին վերահաստատել է, որ Ներկայացուցիչների պալատում պետք է անպայման ընդունել պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում



մարտի 4-ին ընդունած 252-րդ բանաձեւը. «Ես ողջունում եմ մեր հանձնաժողովի կողմից թիվ 252 բանաձեւի ընդունումը եւ կոչ եմ անում գործընկերներիս՝ կանգ չառնել, մինչեւ ԱՄՆ ամբողջ կառավարությունը պատշաճ ձեւով չճանաչի այդ ոճիրը որպես Ցեղասպանություն»,: Պալատի դեմոկրատ մեծամասնության ղեկավար Սփեյնի Հոյերը նույնպես կոչ է արել իր գործընկերներին եւ բոլոր ամերիկացիներին՝ «երբեք չմնալ Ցեղասպանության սովորական վկաների դերում»: Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Բերմանն ընդգծել է, որ բոլոր ամերիկացիները պարտավորություն ունեն՝ ընդդիմանալու Ցեղասպանության ուրացմանը: **Ադամն Շիֆն**, իր հերթին, վստահեցրել է, որ ինքն անձամբ հետամուտ է լինելու Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեւի ընդունմանը Կոնգրեսի երկու պալատներում էլ. «Մենք կհասնենք այս հանցագործության լիակատար ճանաչմանը Միացյալ Նահանգների կառավարության կողմից», շեշտել է Շիֆը: Արարողությանը ներկա այլ օրենսդիրներ նույնպես նշել են, որ իրենք կողմնակից են պատմական արդարության վերականգնմանը:

Դժվար թե Թուրքիան այս «դրական ազդանշանների» մասին էր խոսում, երբ համաձայնեց դեսպան Թանին հետ ուղարկել ու վարչապետի մակարդակով մասնակցել վաշինգտոնյան միջուկային անվտանգության գագաթաժողովին:

Հ. ԱՓՅԱՆ

AZG NEW PDF.qxd 22/04/2010 22:58 Page 1



# Եվրոպայում միակ փակը մնում է հայ-թուրքական սահմանը՝ Թուրքիո քաղաքականության պատճառով

**«Հայաստանի եւ Թուրքիայի ֆուտբոլի ազգային հավաքականների 2008 թվականի սեպտեմբերյան հանդիպումից սկսված գործընթացի այս փուլը մեզ համար այլեւ ավարտված է», երեկ իր ուղերձում հայտարարեց Հայաստանի նախագահը, ըստ էության հաստատելով, որ ֆուտբոլային դիվանագիտության խաղակետերն ավարտվեցին:**

**2008 թ. հուլիսին Սերժ Սարգսյանը ֆուտբոլային խաղին մասնակցելու հրավեր ուղարկեց Թուրքիայի նախագահին, որից հետո հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման առնչությամբ մի շարք հատկանշական քայլեր ձեռնարկվեցին հայկական կողմից, ինչն ամեն դեպքում հանգեցրեց անպտուղ այս վիճակին՝ հայ-թուրքական սահմանի բացման մշուշոտ հեռանկարի իսկ բացակայությանը:**

**Մասնավորապես, դեռեւս անցյալ տարվա ապրիլի 22-ին նախաստորագրված հայ-թուրքական արձանագրություններն արդեն մինչեւ սեպտեմբեր տեղի ունեցած քննարկումների ֆոնին շարունակություն ունենալու եւ վավերացման գործընթաց անցնելու շեմին հայտնվեցին:**

**Միեւնույն ժամանակ, թուրքական կողմը նախ բացասաբար արձագանքեց արձանագրությունների նախաստորագրմանը: Իսկ անցյալ տարվա աշնանը Թուրքիայի խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում տեղի ունեցած քննարկումներն ակներեւ դարձրին, որ հարեւանների մոտ քաղաքականություն վարելու ու սեփական խոսքերին ու խոստումներին հետեւելու հարցում դարերի ընթացքում գրեթե ոչինչ չի փոխվել. թուրքերն ինչպես պատեհապաշտ եղել էին, այդպես էլ մնացել են ցայսօր:**

**Այդ ժամանակ ակնհայտ դարձավ նաեւ, որ արձանագրությունների վավերացումը, նախաստորագրումից առաջ եւ հետո ցուցաբերած կեցվածքին համապատասխան, Թուրքիան կապում էր նախապայմանների կատարման հետ, որ, բազմիցս ժխտված լինելու ֆոնին անգամ ադրբեջանամետ ու ադրբեջանահոտ էին:**

**Ասել է, թե հայ-թուրքական նախաստորագրված արձանագրությունների հետագա ճակատագրի հարցը Թուրքիայում կապվեց այնպիսի մի խնդրում Հայաստանից զիջումներ կորզելու ցանկության ու փորձի հետ, ինչի վրա մի երկար ժամանակ աշխատում է ԵԱՀԿ Մինսկի խումբը, բայց դեռ որեւէ հարցի լիարժեք համաձայնեցման մասին չի էլ կարողանում բարձրաձայնել: Եվս մեկ նախապայման էլ թուրքական կողմը, դրսեւորելով բնավ էլ ոչ այն կառուցողական մոտեցումը, որ այստեղ ու այնտեղ հայտարարում են թուրք չինովնիկները, կապեց ու կապում է Հայոց ցեղասպանության հարցի հետ:**




**Քանի դեռ արձանագրությունները նախաստորագրված էին, նախապայմաններն էլ էին մի տեսակ նախահռչակվածի, նախահայտարարվածի նման հնչում այն դեպքում, երբ արդեն անցյալ տարվա հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների արտաքին գերատեսչությունների ղեկավարների ներկայությամբ նախատեսված ստորագրման արարողությունը ձգձգվում էր ու ձգձգվում, աշխարհն էլ շունչը պահած հետեւում էր, թե ինչու են Հայաստանի եւ Թուրքիայի ԱԳ նախարարները ուշացնում «պատմական պահը»:**

**Իսկ ձգձգվեց ստորագրումը ավելի քան երեք ժամ այն պատճառով, որ Ցյուրիխում Թուրքիայի պատվիրակությունը բռնել էր ու Ահմեդ Դավութօղլուն ուզում էր անպայման ելույթ ունենալ ու Ղարաբաղ եւ Ցեղասպանություն խոսել, դեռ չխոսելով Արձանագրություններում «ուղղումներ» մտցնելու թուրքական համառ փորձերի մասին: Եվ սա այն դեպքում, երբ թուրքական կողմում սովորական ու սպասելի են ամեն պահի արդեն իսկ ներկայացված նախապայմանների մի նոր ձեւակերպմամբ հանդես գալու փորձերն ու դրսեւորումները, ավելին: Այդ հայտարարությունները ըստ հարմարության ու անհրաժեշտության կարող են վերաձեւակերպվել որպես «տարածաշրջանային կայունություն» կամ ուղղակի հնչել որպես Լեռնային Ղարաբաղի հարակից տարածքների «վերադարձի պահանջ»:**

**Ինչեւէ, հայ-թուրքական արձանագրությունների ֆուտբոլային խաղակետերի մի հետաքրքրական դրվագ էլ Հայաստանի սահմանադրական դատարանում այդ արձանագրությունների սահմանադրականության հարցի քննարկումն էր ու այդ առնչությամբ ընդունված որոշումը, որ հերթական քայլն էր հայկական խորհրդարանում արձանագրությունների վավերացման ընթացակարգի ամբողջականության ապահովման ուղղությամբ: Ու հաստատ սպասելի էր, որ թուրքական կողմը սա էլ «մասին փաթաթան» սարքեց, առանց հասկանալու ու խորանալու հայտարարելով, թե ՍԴ որոշումը «նախապայմանների ներկայացման փորձ» է:**

**Թուրքիայի կեցվածքի ու մոտեցման «չինիչ» տիրույթից դուրս լինելը արտահայտվեց նաեւ այս հարցում, քանի որ ՍԴ-ն մեղադրվեց մի այնպիսի հարցում, ինչով «մեղք էր գործում» Թուրքիան տառացիորեն ամեն օր: Ամեն առիթով հնչեցնելը, թե տարածքներ վերադարձրեք կամ լուծեք Ղարաբաղի հարցը, կամ դադարեցրեք ցեղասպանության ճանաչման գործընթացը կամ մի խուսեք այդ ողբերգությունից, Թուրքիայի երերուն քաղաքականության ոչ եզակի ապացույցներից են:**

**Այս համատեքստում էլ ըստ էության երեկ հնչեց Հայաստանի նախագահի ուղերձի ամենահատկանշական հայտարարությունը. «Մենք վճռել ենք առայժմ դուրս չգալ գործընթացից, այլ միայն կասեցնել արձանագրությունների վավերացման ընթացակարգը: Վստահ եմ՝ սա է պահանջում մեր ազգային շահը»:**

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ

# Կոալիցիայի հայտարարությունն ու նախագահի ուղերձն ավարտեցին մի փուլ եւ թակում են նոր փուլի դռները

Երեկ, երբ հասարակությունը տեղյակ էր ու սպասում էր Հայաստանի նախագահի ուղերձին, մի փոքր անսպասելիորեն համատեղ հայտարարությամբ հանդես եկան կոալիցիոն ՀՀԿ-ի, ԲՀԿ-ի, ՕԵԿ-ի քաղաքական խորհուրդները: Կոալիցիոն հայտարարության մեջ մասնավորապես ասված էր. «Վերջին երկու տարվա ընթացքում ՀՀ նախագահը ՀՀ Ազգային ժողովի քաղաքական մեծամասնության աջակցությամբ հետեւողական քայլեր իրականացրեց առանց նախապայմանների հայ-թուրքական հարաբերությունների հաստատման եւ զարգացման ուղղությամբ: Այդ գործընթացին իրենց ակտիվ ավանդը բերեցին ԱՄՆ-ը, Ռուսաստանի Դաշնությունը, Ֆրանսիան, Շվեյցարիան: Աշխարհի բազմաթիվ երկրներ դրականորեն արձագանքեցին այդ նախաձեռնությանը՝ ընդգծելով դրա բացառիկ կարեւորությունը տարածաշրջանային կայունության հաստատման ու առկա հիմնախնդիրները քաղաքակիրթ երկխոսությամբ լուծելու հարցում»: Նշվում էր նաեւ, որ հայկական կողմի կառուցողական ջանքերը եւ միջազգային հանրության ակնկալիքները շարունակաբար բախվել են թուրքական կողմի անհետեւողական, խուսափողական դիրքորոշումներին, շարունակական նախապայմանների առաջադրման քաղաքականությանը, որը փակուղի մտցրեց 2009 թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում ստորագրված հայ-թուրքական արձանագրությունները խելամիտ ժամկետներում վավերացնելու գործընթացը. «ՀՀ Ազգային ժողովի քաղաքական մեծամասնությունն անընդունելի է համարում թուրքական կողմի, մասնավորապես՝ վարչապետ Էրդողանի վերջին օրերի հայտարարությունները, որոնցով կրկին հայ-թուրքական արձանագրությունների վավերացումը Թուրքիայի խորհրդարանի կողմից անմիջական կախվածության մեջ է դնում Լեռնային Ղարաբաղ-Ադրբեջան հակամարտության կարգավորումից: Միաժամանակ, նկատի ունենալով, որ թուրքական կողմի հրաժարումն առանց նախապայմանների խելամիտ ժամկետներում արձանագրությունները վավերացնելու պարտավորություններից իմաստազրկում է այս փուլում դրանց վավերացման գործընթացի հետագա շարունակումը ՀՀ Ազգային ժողովում, անհրաժեշտ է համարում այդ գործընթացի առկախումը, եւ որպես ըստ անհրաժեշտության քննարկվող հարցի՝ դրանց քննարկումն Ազգային ժողովի քառօրյա նիստերի օրակարգերից հանելը, մինչեւ թուրքական կողմը պատրաստ կլինի առանց նախապայմանների գործընթացի հետագա շարունակման», հարմար են գտել ընդգծել կոալիցիոն կուսակցությունների քաղաքական խորհուրդներն իրենց համատեղ հայտարարության մեջ:

Այս հայտարարության առաջին մեկնաբանությունները երեկ իրարամերժ էին, բայց կարծիք հայտնողների մեծ մասը ողջունել էր այսպիսի մոտեցումը: «Կոալիցիոն ուժերի համատեղ հայտարարությունը համարում եմ իրատեսական, պետական եւ ազգային շահերից բխող», գնահատել էր ՀՀԿ մամուլի խոսնակ **Էդուարդ Շարմազանովը**: Փաստորեն այս փուլում Հայաստանի քաղաքական մեծամասնությունը առաջարկում է կասեցնել գործընթացը՝ արձանագրությունները հանելով ԱԺ օրակարգից, քանի որ Թուրքիան Վաշինգտոնում բացահայտ հայտարարել է, որ թուրքական կողմն այս փուլում պատրաստ չէ վավերացնել արձանագրությունները: Բայց հայերս հավատարիմ ենք հաշտեցման գործընթացին, վստահեցնում էին կոալիցիոն շրջանակը ներկայացնող քաղաքական գործիչները:

ՀՅԴ-ն՝ ի դեմս **Վահան Հովհաննիսյանի**, մասամբ ողջունեց ԱԺ օրակարգից արձանագրությունները հանելու առաջարկը՝ այնուամենայնիվ դա կիսատ քայլ համարելով եւ պնդելով, որ երեկ տեղի ունեցած ՀՅԴ եւ մի խումբ կուսակցությունների համատեղ խորհրդակցության նպատակը եղել եւ մնում է հայ-թուրքական արձանագրություններից Հայաստանի ստորագրության հետկանչը: «Ժառանգության» վարչության նախագահ **Արմեն Մարտիրոսյանը** եւս ուշացած կիսաքայլ համարեց հայտարարությունը. «Անհրաժեշտ է ոչ միայն ԱԺ-ից հետ վերցնել արձանագրությունները, այլեւ ընդհանրապես՝ ստորագրությունները՝ արձանագրություններից», այս էր նրա կարծիքը: Մեսիջ՝ Թուրքիային եւ միջազգային հանրությանը. այսպես գնահատեց քաղաքագետ **Ալեքսանդր Իսկանդարյանը** արձանագրությունները ԱԺ օրակարգից հանելու մտադրությունը: Իսկ ՀԱԿ-ի համակարգող **Լեւոն Զուրաբյանն** «ուրացման ուրացում» կոչեց արձանագրությունները խորհրդարանի օրակարգից հանելու առաջարկը:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Հայոց ցեղասպանությունն արտասահմանյան մամուլի առաջին էջերում

Արտասահմանյան առաջատար մամուլի 60 բնօրինակ եւ կրկնօրինակ հրապարակումներ, հարցազրույցներ ու վկայություններ ներկայացնում են հայ ժողովրդի 19-20-րդ դարերի պատմությունը՝ խաղաղ կենցաղային միջավայրից մինչեւ 1894-96թթ համիդյան կոտորածները, 1909թ. Կիլիկիայի արհավիրքն ու 1915-1923թթ. Հայոց ցեղասպանությունը:

Յուրատիպ ցուցադրության նախաձեռնողը Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտն է, խորագիրը՝ «Հայոց ցեղասպանությունն արտասահմանյան մամուլի առաջին էջերում»:

Ցուցադրությունը հերթական անգամ փաստեց, որ հայկական կոտորածները մշտապես եղել են արտասահմանյան մամուլի ուշադրության կենտրոնում: Անգլիական, ֆրանսիական, ամերիկյան, իտալական եւ ռուսական պարբերականներում ներկայացված են ոչ միայն Օսմանյան կայսրությունից բռնագաղթեցված հայերի եւ Հայոց ցեղասպանությունից փրկվածների վկայությունները, այլեւ օտարերկրյա դիվանագետների, միսիոներների, լրագրողների տեղեկությունները ու հարցազրույցները:

Մի շարք հրապարակումների ուղեկցում են 1893թ. հետո տեղի ունեցած կոտորածների լուսանկարները, որոնք բացառիկ արժեք ունեն եւ փաստում են Թուրքիայում հայերի կոտորածներն ու տեղահանությունը:

Թանգարան-ինստիտուտի տնօրեն **Հայկ Դեմոյանը** կարեւորեց, որ Հայոց ցեղասպանության անհերքելի ապացույցները ներկայացնում են ոչ միայն հայկական պարբերականները, այլեւ արտասահմանյան առաջատար լրատվամիջոցները:

«Լուսանկարներն էլ հնարավորություն են տալիս անաչառ հերքելու Ցեղասպանությունը ժխտողներին: Ներկայացված փաստերն անհերքելի ապացույց են», ասաց նա:

Ցուցանմուշների կրկնօրինակները հետագայում կներկայացվեն տարբեր երկրներում:

Հ. Հ.

# 95 տարի անց Հայաստանը դեռ կանգնած է կոտրած տաշտակի առջեւ

**«Իհարկե ոչ Նյուրնբերգյան դատավարության մակարդակով, սակայն հայերս էլ Առաջին համաշխարհային պատերազմից հետո ունեցանք դատավարություններ, եւ Մեծ եղեռնի հիմնական նախաձեռնողներն ու կազմակերպիչները դատապարտվեցին: Սեւրի պայմանագրով դրվեց Ցեղասպանության հետեւանքների վերացման հարցը: Եթե այս ամենից հետո՝ 95 տարի անց, մենք կանգնած ենք կոտրած տաշտակի առջեւ, ապա պարտավոր ենք մտածել՝ ինչո՞ւ այսպես եղավ, մե՞նք էինք տկարամիտ, թե՞ մեր հակառակորդներն էին ավելի նենգ», երեկ «Սլաք» ակումբում լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց «Ազգային ինքնորոշում» կուսակցության (ԱԻՄ) նախագահ Պարույր Հայրիկյանը:**

**Քաղաքական գործչի կարծիքով՝ Ցեղասպանությունից հետո մեր երկրում սկսվեց մի նոր ցեղասպանություն: Հայաստանի բռնազավթումը բոլշեւիկյան ուժերի կողմից, ըստ նրա, Ցեղասպանության անմիջական շարունակությունն էր:**

**«Ոչ մի դասագրքում չի գրվում, որ Հայաստանում ռուս-թուրքական պայմանագրով արգելված է եղել թուրքերի դեմ խոսելը: Ըստ Մոսկվայի պայմանագրի՝ նրանք, ովքեր կխոսեին Թուրքիայում կատարված ոճրագործության մասին, պետք է հետապնդվեին: 1915 թվականի ապրիլի 24-ին 151 մտավորականների կալանավորումն ու սպանությունը մենք համարում ենք Ցեղասպանության սկիզբ, իսկ 1921 թվականին 1500 հայ սպաների սպանությունը՝ «բնականոն» քայլ: Պատկերացրեք՝ շուրջ 70 տարի ինչպիսի վիճակում են մեզ պահել», ասում է Պարույր Հայրիկյանը:**

**Ըստ բանախոսի՝ աշխարհի որեւէ պետության դիվանագետ կամ քաղաքական գործիչ, այդ թվում նաեւ թուրքերը, շատ լավ հասկանում են, որ ճանաչում նշանակում է տվյալ հանցագործության գրանցում ու պաշտոնական վավերացում, որին պետք է հաջորդեն դատապարտումն ու վնասների փոխհատուցումը, սակայն Հայաստանը մինչեւ այսօր չունի ռազմավարություն եւ դեռ կանգնած է կոտրած տաշտակի առջեւ:**

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 22/04/2010 21:57 Page 1



# Թիվ 1 հարցը աշխատատեղերի ստեղծումն է

*Նշեց վարչապետ Տիգրան Սարգսյանը՝ այս տարվա առաջին եռամսյակի մակրոտնտեսական ցուցանիշները ներկայացնելիս*

Մինչ կառավարության նիստի սկսվելը վարչապետ **Տիգրան Սարգսյանն** անդրադարձավ նախօրեին ազգային վիճակագրական ծառայության հրապարակած՝ առաջին եռամսյակի սոցիալ տնտեսական ցուցանիշներին, արձանագրելով, որ առաջին եռամսյակում 5,5 տոկոս համախառն ներքին արդյունքի աճը խոսում է մեր տնտեսության՝ վերականգնման փուլ մտնելու մասին: Նա առաթին հերթին մատնանշեց արդյունաբերության եւ էլեկտրաէներգիայի արտադրության 10 տոկոսանոց աճը:

«Ունենալով 5,5 տոկոս ընդհանուր աճ, այնուամենայնիվ, շինարարության ոլորտում դեռեւս ունենք անկում: Մի կողմից դա վկայում է, որ տեղի է ունենում տնտեսական համակարգի դիվերսիֆիկացիա, եւ կախվածությունը շինարարության աճի տեմպերից նվազում է, մյուս կողմից դա նշանակում է, որ դեռեւս մասնավոր ներդրումներ շինարարության ոլորտ չեն գնում», ասաց վարչապետը, տեղեկացնելով, որ 2008-ին շինարարության ծավալների 75 տոկոսը ֆինանսավորվել էր մասնավոր հատվածի հաշվին: Մինչդեռ նոր կառուցվող շինարարական օբյեկտների վրա դեռեւս մասնավոր ներդրումներ չեն արվում:

Տիգրան Սարգսյանը նաեւ «թյուրըմբռնում» համարեց այն տեսակետը, թե կառավարությունը շինարարության ոլորտում ֆինանսավորում է իրականացրել: «Այդպիսի բան չի եղել, մենք մեր կանխիկ հոսքերը շինարարության ոլորտ չենք ուղղել, այլ հորդորել եւ խթանել ենք, որպեսզի առեւտրային բանկերը ֆինանսավորեն անավարտ շինարարությունները», ընդգծեց նա:

Արտաքին առեւտրաշրջանառության մասին խոսելով՝ վարչապետը շեշտեց, որ արտահանումն ավելացել է 60 տոկոսով, ներմուծումը՝ 23 տոկոսով: «Արտահանումն, իհարկե, հիմնականում պայմանավորված է հանքահումքային արդյունաբերության արտահանման ծավալների աճով եւ համաշխարհային տնտեսության ցուցանիշների բարելավմամբ», ասավ վարչապետը եւ ներկայացրեց արդյունաբերության առանձին ճյուղերի ցուցանիշները: Համաձայն դրանց, ՏՏ ոլորտում աճը շուրջ 3 տոկոս է կազմել, հանքահումքային արդյունաբերությունում՝ 21 տոկոսով, շինանյութերի արտադրությունում՝ շուրջ 50 տոկոսով: «Շինանյութերի արտահանումն առաջին եռամսյակում նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ եռապատկվել է: Քիմիական արդյունաբերությունը նույնպես դրսեւորել է լավ ցուցանիշներ. աճել է շուրջ 2,5 անգամ, դա պայմանավորված է նաեւ դեղագործական ձեռնարկությունների դրական ցուցանիշներով: Ոսկերչությունն, ինչպես նաեւ ադամանդամշակությունը 40 տոկոսանոց աճ են արձանագրել: Հաստոցաշինությունը եռապատկել է ծավալները, իսկ սարքավորումների արտադրությունը շուրջ 15 տոկոս աճ է արձանագրել», նշեց Տիգրան Սարգսյանը, միաժամանակ փաստելով, որ դեռեւս անկում ունենք թեթեւ արդյունաբերության մեջ, փայտաշինության եւ էլեկտրատեխնիկայի ոլորտներում, իսկ տուրիզմի բնագավառում դարձյալ աճ է արձանագրվել՝ շուրջ 5 տոկոսով:

Այնուհետեւ վարչապետը տեղեկացրեց, որ Արժույթի միջազգային հիմնադրամը հայտարարել է, որ 2010-ի կանխատեսումները ստիպված է լինելու փոխել, որովհետեւ առաջին եռամսյակի արդյունքները կանխատեսումից ավելի դրական են եղել: Տիգրան Սարգսյանն անհրաժեշտ համարեց նաեւ, որ 2010 թվականի առաջին եռամսյակի մեր տնտեսության կառուցվածքային փոփոխությանը համարժեք վերանայվի հարկման բազան, եւ նշեց, որ նման հանձնարարական է տրվել ֆինանսների նախարարությանը: Վարչապետն անդրադարձավ նաեւ արտաքին պարտք-համախառն ներքին արդյունք ցուցանիշին: Նշելով, որ արտաքին պարտքի սպասարկման մի մասը՝ մոտ 800 մլն դոլարն իրականացնելու է մասնավոր հատվածը, նա եզրակացրեց, որ «արտաքին պարտքի տեսակետից գտնվելու ենք օրենսդրությամբ սահմանված ցուցանիշների շրջանակում» եւ շարունակելու են բանակցությունները տնտեսական աճը խթանելու նպատակով նոր պարտքեր վերցնելու առումով:

Խոսելով բիզնես միջավայրի մասին, Տիգրան Սարգսյանը համոզմունք հայտնեց, որ «բոլոր պրոբլեմներով, մեր բոլոր բացթողումներով, թերություններով հանդերձ այս երկու տարիների ընթացքում բիզնես միջավայրը բարելավվել է, եւ դա տնտեսական աճի կարեւորագույն խթան է: Մեր խնդիրն է մակրոտնտեսական կառավարումից այսուհետեւ իջնել միկրոմակարդակ եւ իրականացնել կոնկրետ նախագծեր, որոնք աշխատատեղեր են ստեղծում»: Իսկ այս պահի թիվ 1 հարցը վարչապետը համարեց հենց աշխատատեղերի ստեղծումը, ասելով, որ կառավարության առաջիկա ծրագրերը պետք է ուղղված լինեն այդ նպատակին:

Ա. Ս.

ՄԱՐԴԻԿ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ՉԵՆ

# «Ոստիկանություն մտնելը վնասակար է առողջության համար»

Վերջին օրերին հանրապետությունում տեղի ունեցած դեպքերը փաստում են, որ մարդիկ պաշտպանված չեն: Դա չի ժխտում նաեւ մարդու իրավունքների պաշտպան (ՄԻՊ) **Արմեն Հարությունյանը**: Նա դժգոհ է Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության ներկա իրավիճակից: Թեպետ բողոքում են, զեկույցներ գրում, սակայն էական առաջխաղացում չի գրանցվում:

Նոր Նորքի համայնքում ապրիլի 17-ին տեղի ունեցած խուլիգանական գործողությունները նա որակեց «երկրի կրիմինոգեն վիճակի» խոսուն վկա:

Օմբուդսմենը համոզված է, որ քաղաքի փողոցներում մարդիկ չեն կարողանում ազատ զբոսնել, նրանց իրավունքների պաշտպանության խնդիր կա, ինչի կապակցությամբ թերանում են ՄԻՊ-ի եւ ոստիկանության գործողությունները:

Ոստիկանության Չարենցավանի բաժնում Վահան Խալաֆյանի՝ ըստ պաշտոնական վարկածի, ինքնասպանության կապակցությամբ Հարությունյանը նկատեց.

«Ի՞նչ է, պետք է ոստիկանության վրա գրել եւ փակցնել՝ վնասակար է մարդկանց առողջության համար, որ մարդիկ զգուշանան եւ չմտնե՞ն: Պետք չէ համոզել, որ ինքնասպանություն է եղել, եթե անգամ եղել է, ապա պետք է այնպես անել, որ դա չլիներ», ասաց նա:

ՄԻՊ-ը դժգոհ է նաեւ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությանը կից գործող հաշմանդամության կարգերը քննող բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովից: Կառույցը միակն է, որի հետ մինչ այսօր օմբուդսմենը դրական համագործակցության որեւէ նախադեպ չունի: Նրա դիտարկմամբ կառույցը խիստ կամայական է գործում: Պատահում են դեպքեր, երբ երիկամը հեռացրած մարդուն հաշմանդամության համապատասխան փաստաթուղթ են տվել, մինչդեռ նույն օրինակով մյուսին փաստաթուղթ չեն տվել:

«Հաճախ մեկ երիկամով մարդուն այնտեղ հայտնում են, որ նա կազդուրվել է, եւ նրա մեկ երիկամն իր վրա է վերցրել նաեւ երկրորդի ֆունկցիաները», կեսկատակ ասաց նա՝ հավելելով, որ նման խնդիրները վեր հանող իրենց բողոքներին կառույցը որեւէ պատասխան չի տվել:

Հ. Հ.

# «Վիվասել-ՄՏՍ»-ն պատասխանատու է զգում ազգային ինքնության պահպանման հարցում

*Հայտարարել է Ռալֆ Յիրիկյանը ԱՄՆ-ում ունեցած հանդիպումների ժամանակ*

Ինչպես տեղեկացանք «Վիվասել-ՄՏՍ»-ի՝ մեզ տրամադրած մամուլի հաղորդագրությունից, ապրիլի 9-19 գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանն ընկերության կայացման եւ զարգացման ուղին է ներկայացրել ԱՄՆ-ում՝ Նյու Յորքում, Վաշինգտոնում, Ֆիլադելֆիայում եւ Լոս Անջելեսում:

«Հայաստանի առաջատար բջջային օպերատորի կարգավիճակը «Վիվասել-ՄՏՍ»-ի ուսերին զգալի պատասխանատվություն է դնում՝ ազգային ինքնության պահպանման ջանքերին աջակցության առումով: Յուրաքանչյուր հայի՝ աշխարհի որ անկյունում էլ լինի, մենք պետք է ասենք, թե որքան մեծ է մեր հայրենիքը եւ որքան մեծ է մեր պատասխանատվությունը դրա զարգացման եւ բարգավաճման գործում», ամերիկահայերի հետ հանդիպումների ժամանակ նշել է **Ռալֆ Յիրիկյանը**:

Հայկական դպրոցներում եւ կրթական այլ հաստատություններում ներկայացվել է «Վիվասել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրենի եւ նրա թիմակիցների «Բիզնես, որն ունի առաքելություն» նախագիծը: «Հայաստանում մեկնարկած նախագիծը բերեց մեզ Սփյուռքում գտնվող մեր հայրենակիցների՝ ձեզ մոտ, մեր երկրում բարգավաճման հնարավորությունները ձեզ ներկայացնելու վճռականությամբ: «Վիվասել-ՄՏՍ»-ն վառ օրինակ է, որի հաջողություններն անհնարին են առանց հայ երիտասարդ նորավարտ մասնագետների եւ տաղանդավոր վարչական աշխատակիցների», ասել է ընկերության ղեկավարը Նյու Յորքում:

Լոս Անջելեսում, դիմելով դարձյալ համալսարանական եւ դպրոցական լսարանին, Ռալֆ Յիրիկյանն ասել է.



«Հայրենիքի մասին մեր պատկերացումները կազմվում են մեր ընկերության նվաճումներից դատելով: Եթե մենք կարողացանք իրագործել մեր նպատակները, ուրեմն կարող եք եւ դուք: Պետք չէ հարցնել, թե ի՞նչ է անում հայրենիքն ինձ համար, պետք է հարցնել՝ թե ես ի՞նչ եմ անում հայրենիքիս համար»:

Ա. Ս.

# Եռամսյակային ցուցանիշների աճ «Ամերիաբանկում»

«Ամերիբանկի» այս տարվա առաջին եռամսյակի ցուցանիշները երեկ լրագրողներին ներկայացրեց բանկի զարգացման գծով տնօրեն **Տիգրան Ջրբաշյանը**: Նա մասնավորապես հայտնեց, որ բանկի ընդհանուր շահույթը, «Կասկադ բանկի» հետ միավորվելուց հետո, կազմել է 654 մլն դրամ, իսկ միավորված կապիտալը՝ 30 մլրդ դրամ: Այս ցուցանիշով բանկը երկրորդն է Հայաստանի բանկային համակարգում: Տիգրան Ջրբաշյանը նշեց, որ այս ցուցանիշների աճը շարունակվում է եւ սպասվում է, որ այդ տեմպը կպահպանվի մինչեւ տարեվերջ: Իսկ միայն «Ամերիաբանկի» ակտիվներն այս տարվա առաջին եռամսյակում աճել են 136 տոկոսով եւ կազմել 110,5 մլրդ դրամ: Բնակչությունից բանկի ներգրավված միջոցները կազմել են 88,2 մլրդ դրամ, իսկ «Կասկադ բանկի» հետ միասին՝ 99 մլրդ դրամ:



Խոսելով վարկային պորտֆելի ցուցանիշների մասին, «Ամերիաբանկի» զարգացման գծով տնօրենը տեղեկացրեց, որ այս տարվա առաջին եռամսյակում վարկավորման ծավալներն ավելացել են 7 մլրդ դրամով եւ գերազանցել 60 մլրդ դրամը: Վարկային պորտֆելի աճի ցուցանիշներով բանկն առաջատար տեղեր է զբաղեցնում շուկայում, իսկ այդ աճն, ըստ Տիգրան Ջրբաշյանի, հիմնականում փոքր ու միջին բիզնեսի վարկավորման շնորհիվ է տեղի ունեցել: Նա նաեւ հավաստիացրեց, որ վարկային պորտֆելի աճի 80 տոկոսն առաջին եռամսյակում ապահովվեց նոր հաճախորդների շնորհիվ: Իսկ «Կասկադ բանկի» հետ միավորվելուց հետո, բանկի վարկային պորտֆելը կազմել է 71,9 մլրդ դրամ:

Ինչ վերաբերում է բանկի միավորման գործընթացին, ապա այն, ըստ զարգացման գծով տնօրենի, զգուշորեն է ընթանում եւ հատուկ ուշադրություն է պահանջում: Այս կապակցությամբ անհրաժեշտություն է առաջացել ընդլայնել մասնաճյուղերի ցանցը եւ զարգացնել քարտային բիզնեսը, քանի որ «Կասկադ բանկն» իրականացնում էր խոշոր վարկային ծրագրեր, որոնք պետք է շարունակվեն:

«Ամերիաբանկի» կողմից առաջարկվող նոր ծառայություններ են կառուցվածքային դեպոզիտն ու մետաղական հաշիվները: Հայտնելով այս մասին, Տիգրան Ջրբաշյանը պարզաբանեց, որ կառուցվածքային դեպոզիտը ենթադրում է եկամտի ստացման երկու բաղադրիչ: Առաջինը՝ ֆիքսված եկամուտ, ինչպես արվում է սովորական ավանդների դեպքում եւ երկրորդը՝ լրացուցիչ եկամուտ, որը կախված է համաշխարհային շուկայում ֆինանսական տարբեր ակտիվների փոփոխությունների հետ: Այդպիսիք կարող են լինել նավթը, ոսկին, Dow Jones-ի ինդեքսը:

Իսկ մետաղական հաշիվների թողարկումը հնարավորություն կտա հաճախորդին ներդրումներ կատարելու ոչ թե ստանդարտ ներդրումային գործիքների, այլ ոսկու մեջ: Առավել եւս, որ ոսկու գնողականությունը վերջին 150 տարվա ընթացքում չի փոխվել, ի տարբերություն ամերիկյան դոլարի: Տիգրան Ջրբաշյանը տեղեկացրեց նաեւ, որ ներդրումային միջավայրում մեծ պահանջարկ ունեցող մի շարք նոր նախագծեր են մշակվում, որոնք մինչեւ մայիսի 15-ը կներկայացվեն հասարակությանը:

Ա. Ս.

# Ցեղասպանությանը նվիրված միջոցառումներ Սլովակիայում

**Եվրոպայի հայկական միությունների (ԵՀՄ) ֆորումը տեղեկացնում է, որ այսօր Սլովակիայի մայրաքաղաք Բրատիսլավայում կանցկացվեն Հայոց ցեղասպանությանը նվիրված միջոցառումներ: Միջոցառումները կսկսվեն՝ 2004-ին Սլովակիայի խորհրդարանի ճանաչած Ցեղասպանության բանաձեւի պատվին Դանուբի ափին դրված հայկական խաչքարի դիմաց ծաղկեպսակի տեղադրման արարողությամբ: Արարողությանը կմասնակցեն Սլովակիայում Ֆրանսիայի, Հունաստանի, Լեհաստանի եւ մի շարք այլ երկրների դեսպաններ, կառավարության ներկայացուցիչներ եւ այլք: Այնուհետեւ Բրատիսլավայի ֆրանցիսկյան եկեղեցում կկազմակերպվի էկումենիկ պատարագ՝ Պրահայի հոգեւոր առաջնորդ Բարսեղ Փիլավչյանի, կաթոլիկ եկեղեցու վարդապետ հայր Միխայելի, ավետարանական եկեղեցու ներկայացուցիչ Յան Գռեշշոյի եւ առաքելական եկեղեցու արքեպիսկոպոս Լյախոյի մասնակցությամբ՝ նվիրված 1,5 մլն անմեղ զոհերի հիշատակին:**

**Պատարագից հետո ԵՀՄ նախագահ Աշոտ Գրիգորյանը բոլոր ներկաների մասնակցությամբ կանցկացնի ընդունելություն:**

Հ. Ա.

# «Ժխտական ինդուստրիայի հայրենիքը Թուրքիան է»

## Հարցազրույց պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյանի հետ

***Հայտնի արեւելագետ, պատմաբան, ԳԱԱ թղթակից անդամ, մեր թերթի հեղինակներից Նիկոլայ Հովհաննիսյանը վերջերս ընդարձակ հարցազրույց է տվել «Արվեստ» ինտերնետային ամսագրի (arvest.am) խմբագիր Ռուզան Զաքարյանին, Ցեղասպանության 95-րդ տարելիցի առիթով: Իր շահեկանության համար վերոհիշյալ ամսագրի կայքէջից արտատպում ենք հարցազրույցի որոշ հատվածներ:***

**- Պրն Հովհաննիսյան, Հայոց ցեղասպանության գործում Դուք մեղադրում եք նաեւ քրդերին, չերքեզներին, մի՞թե քրդերը եւ չերքեզները թուրք իշխանավորների առաջադրանքը կատարողներ չէին ընդամենը...**

- Ես հիմա կպարզաբանեմ իմ ասածները. ազգային այդ խմբավորումները եւ՛ հրահրիչ էին եւ՛ գործուն մասնակից: Ովքե՞ր էին իրականացնում ջարդերը թուրքերի գլխավորությամբ՝ քրդերը եւ չերքեզները: Ո՞վ կարող էր 1915-ի դեպքերը կանխարգելելու դերը ստանձնել: Ուսումնասիրությունները բերում են հիմնական մի եզրահանգման՝ որքան էլ մենք քննադատենք եվրոպական պետություններին, նրանց խոստումներ տալու եւ ստանձնած պարտավորություններից հրաժարվելու համար, այդուհանդերձ, այդ երկրները թե՛ 90-ականների, թե՛ 20-րդ դարի սկզբներին դրական դերակատարումով են հանդես եկել:

**- Անհատների առումով, թերեւս, բայց պետական մակարդակով ի՞նչն եք դրական դերակատարում համարում:**

- Այն առումով, որ թուրքերը հայերի դեմ անթույլատրելի գործողությունների դիմելիս, այդուհանդերձ, հաշվի են առել, թե եվրոպական կոնգրեսը ի՞նչ դիրք կգրավի: Եվրոպական կոնգրես ասելով, միջազգայնագետներս ի նկատի ունենք Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, Գերմանիան եւ Ավստրո-Հունգարիան: Ուրեմն, այս երկրների միջեւ թեպետ տարաձայնություններ կային, այդուհանդերձ, չասենք ընդհանուր ճակատով, բայց հաճախ միասնաբար հանդես գալով, ճնշում էին գործադրում Աբդուլ Համիդի, նաեւ երիտթուրքերի վրա, կոտորածներ չկազմակերպելու համար: Հայոց ցեղասպանությունը վերջիններս իրականացրեցին այն ժամանակ, երբ սկսվել էր համաշխարհային առաջին պատերազմը, երբ Եվրոպական կոնգրեսը դադարեց գոյություն ունենալ: Սկսված պատերազմն ընթանում էր հիմնականում ռազմական երկու խմբավորումների միջեւ. մի կողմից Անտանտն էր, որի հիմնական անդամ երկրներն էին՝ Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, (1917-ին սրանց միացավ նաեւ Միացյալ Նահանգները), մյուս կողմից էլ գերմանական բլոկն էր, որի մեջ էին Գերմանիան, Ավստրո-Հունգարական կայսրությունը, Թուրքիան եւ Իտալիան, որը հետագայում դուրս եկավ այդ կազմից: Այս պարագայում ասել, թե այս երկու խմբերում ներառված երկրներն ի վիճակի էին կանխել արհավիրքը, ճիշտ չի լինի, որովհետեւ ամեն մեկն իր խնդիրը լուծելու դժվարին կացության մեջ էր գտնվում: Այն երկրները, որոնք կարող էին կանխարգելիչ դեր ստանձնել, Գերմանիան եւ Ավստրո-Հունգարիան էին, բայց նրանք էլ մատը-մատին չտվեցին:

**- Ռուսաստանը նույնպես, որն ըստ էության, հայության հանդեպ որոշակի պարտավորություններ ուներ:**

- 1915 թվականի մայիսի 24-ին ընդունված մի փաստաթուղթ կա. Անգլիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի հայտարարությունն է, որը նույն օրը միաժամանակ հրատարակվեց եւ Լոնդոնում, եւ Փարիզում եւ Սանկտ-Պետերբուրգում: Այդ փաստաթղթով ի լուր աշխարհի հայտարարվում էր, որ արդեն քանի ամիս է, ինչ Հայաստանում ջարդեր են կատարվում, որն իրականացնում են Օսմանյան իշխանությունները՝ քրդերի օգնությամբ: Ապա հստակ նշվում էր, թե ինչպիսի այլանդակ եղանակներով ու դաժանություններով են ընթանում հայոց կոտորածները: Գրավոր այդ հայտարարությունը պատմական նշանակություն ունի: Այն, փաստորեն տպագիր առաջին փաստաթուղթն է, որով մարդկային պատմության ընթացքում հայոց ջարդերի պատասխանատվությունը դրվեց Օսմանյան կառավարության վրա:

**- Մնում է զարմանալ, որ երեք երկրների ընդունած եւ գրավոր հրապարակած թե նշված, թե տարբեր երկրների արխիվներում առկա բազում ու բազմաբովանդակ փաստերին հակառակ՝ Թուրքիան համառ հետեւողականությամբ շարունակում է մերժել Հայոց ցեղասպանությունը, եւ նույնիսկ պատմաբանների հանձնաժողով ստեղծելու առաջարկությամբ է հանդես գալիս:**

- Գիտե՞ք, թուրքերի հետ շատ դժվար է նույն հարթության վրա գործ ունենալ: Եւ պատճառը բոլորովին այն չէ, որ նրանք խելացի են, խորամանկ են կամ այնպիսի հզոր տրամաբանություն ունեն, որ կարող են դիմացինին խեղճացնել, ինչպես կարծում եւ բարձրաձայն արտահայտվում են մեզանից շատերը: Հատկապես հայ-թուրքական Արձանագրությունները մեջտեղ բերվելուց հետո հայերի մի մասը, մի տեսակ խուճապի մատնվեց ու սկսեց խոսել թուրքերի ճկուն միտք, դիվանագիտական մեծ փորձ ունենալու, հմտորեն խաբելու կարողությունների մասին: Չկա այդպիսի բան: Այդ ամենը միֆ է: Ես նրանց խելացի չեմ համարում: Եւ կարծում եմ, որ մենք սխալ պահվածք ենք որդեգրել՝ թուրքերին վերագրելով մտավոր այնպիսի ունակություններ, որոնցից նրանք զուրկ են:

**- Բայց փաստերը հակառակն են ապացուցում, ինչպե՞ս կարող է մտավոր ունակություններ չունեցող մեկը ժամանակն իր օգտին ծառայեցնել եւ սեփական երկրի սահմանները մեծացնելու, ուրիշի հողերը գրավելու, տարբեր ժողովուրդների մշակութային արժեքները յուրացնելու հմտություն ցուցաբերելով խոշոր եւ հզոր երկիր կառուցել: Մինչդեռ մենք ժամանակի նույն այդ հատվածը՝ պատմական ողբերգություններով, մարդկային ու տարածքային կորուստներով ենք անցել: Մնացածը դետալներ են՝ «եթե»-ների հիմքով: Մի՞թե արդյունքով չի որոշվում, թե ո՞վ է խելացի, ով՝ ոչ:**

- Ես դեմ եմ այդ կարծիքին: Կորուստներ, այո՛, ունեցել ենք, բայց այլ կերպ լինել չէր կարող: Մենք չունեինք մեզ պաշտպանող արտաքին ուժ, իսկ ներքին ուժերով պատրաստ չէինք դիմադրության:

**- Իսկ հիմա մենք պատրա՞ստ ենք դիմադրելու:**

- Այո՛, ես ուզում եմ հավատալ, որ մենք պատրաստ ենք դիմադրելու:

**- Դիվանագիտական ասպարեզու՞մ, սեփական ուժերո՞վ, առանց օտար երկրների օգնությա՞ն:**

- Մենք հիմա ունենք ազգային բանակ, իհարկե այդ բանակը այն թվաքանակը չունի, որ հանենք այնպիսի մի երկրի զինված ուժերի դեմ, որն իր թվաքանակով ՆԱՏՕ-ի եվրոպական կազմում գտնվող ամենամեծ զորաբանակն է համարվում: Ճիշտ է, մենք բանակ ունենք, բայց չենք կարող ասել, որ եթե 77 միլիոնանոց Թուրքիան իր երեք միլիոնանոց բանակով հարձակվի մեզ վրա, մենք մեր ուժերով կարող ենք դիմակայել: Բայց մենք ունենք դաշնակիցներ: Հիմա աշխարհը, միջազգային, միջպետական հարաբերությունների առումով, այն չէ, ինչ եղել է 1915 կամ 1918-20 թվականներին: Յուրաքանչյուր երկիր ագրեսիա ձեռնարկելու փորձ անելուց առաջ հիմնական մի մտահոգություն է ունենում՝ ինչպես գործել, համաշխարհային հանրությանն ապացուցելու համար, որ իր գործողությունները արդարացի են ու պատճառաբանված: Հիշենք, թե համաշխարհային երկրորդ պատերազմի սկիզբը ինչպես եղավ. 1939-ին, սեպտեմբերի 1-ին, Լեհաստան մտնելուց առաջ, իր զինվորներին Հիտլերը լեհական բանակայինների համազգեստ հագցրեց եւ հայտարարեց, թե լեհական զորքն է հարձակվել իրենց վրա: Այսինքն, փորձեց իր հարձակումն արդարացնել եւ որպես անհրաժեշտ քայլ ներկայացնել: Հիմա ավելի հստակեցված են այս կանոնները: Միավորված ազգերի կազմակերպությունը կա, որ չի կարելի իդեալական համարել, բայց մի կառույց է, որի տանիքի տակ 193 երկրների ներկայացուցիչներ կարող են հավաքվել եւ առաջնային այս կամ այն հարցը քննարկել եւ հանգուցալուծման առաջարկներ ներկայացնել: Եւ հետո, ներկա ժամանակներում աշխարհի բաժանման խնդիրներ չկան, ինչպես ասենք այն տարիներին, երբ Անտանտը եւ Գերմանո-Ավստրիական բլոկը գաղտնի համաձայնագիր էին կնքել աշխարհը նվաճելու եւ վերաբաժանելու համար: Փառք Աստծո, հիմա նման միտումներ, նույնիսկ Ամերիկան եւ Ռուսաստանը չունեն: Երկուսին էլ ձեռնտու չէ թույլ տալ երրորդ մի պետության նվաճումը եւ դրանով իսկ վարկաբեկվել:



**- Պարոն Հովհաննիսյան, կանոնները գուցեեւ փոխվել, բայց ութ օր տեւած պատերազմի հետեւանքով Վրաստանի սահմանները վերաձեւեցին... Ուզում եմ ասել, կանոնները փոխվելու հետ, անկանխատեսելի են դարձել նաեւ պատերազմական գործողությունների եղանակները ու ձեւերը, նույնիսկ ժամկետները: Իսկ եթե նման մի սցենար էլ Ղարաբաղում իրականացվի՞:**

- Բայց չի իրականացվել, չէ՞: Ինչու՞ չեն հարձակվում: «Եթե»-ով չէ: Ստեղծվել է որոշակի ստատուս, որը խախտելը դժվար է եւ՛ Հայաստանի եւ՛ Ադրբեջանի եւ՛ Թուրքիայի համար: Թույլ չեն տա: Տեսեք, ե՞րբ սկսվեց Հայաստանի շրջափակումը: 1993-ին, այսինքն այն ժամանակ, երբ Հայոց բանակը ազատագրեց Քելբաջարը: Այդ օրերին Ամերիկայում էր գտնվում Թուրքիայի նախագահ՝ Օզալը, որը խիստ մի հայտարարությամբ հանդես գալով՝ խուճապի ալիք բարձրացրեց Հայաստանում: Նա բառացիորեն ասաց. «Եկել է հայերին ատամներ ցույց տալու ժամանակը», եւ ավելացրեց. «Հայերը դասեր չքաղեցին անատոլիական դեպքերից»: Տեսեք, երբ մենք ենք այդ մասին խոսում, նրանք զայրույթից խեղդվում են, իսկ մեզ սպառնալու պահին, ցեղասպանություն տերմինը շրջանցում եւ օգտագործում են «անատոլիական դեպքեր» բառակապակցությունը: Այդ օրերին, իսկապես իրավիճակը բարդ ու անկանխատեսելի էր: Թուրքական զորքերը կենտրոնացվել էին հայկական սահմանի վրա: Ահա այդ ժամանակ է, որ խաղի մեջ մտան երկու խոշոր պետություններ՝ Ռուսաստանը եւ Միացյալ Նահանգները: Մարշալ Շապոշնիկովը հայտարարեց՝ եթե Թուրքիան հարձակվի Հայաստանի վրա, ապա դա համաշխարհային երրորդ պատերազմի սկիզբը կդառնա: Եւ բոլորը հասկացան, որ ասվածը նշանակում էր միջուկային պատերազմ:

**- Ասացիք, թե Միացյալ Նահանգներն էլ է այդ օրերին սաստել Թուրքիային:**

- Լինելով Միացյալ Նահանգներում եւ աշխատելով նշանավոր այնպիսի գիտական հաստատությունում, ինչպիսին Ջորջ Վաշինգտոնի համալսարանն է, ես հնարավորություն ունեցա ուսումնասիրել ամերիկյան որոշ աղբյուրներ, որոնք «փակ է» գրիֆի տակ են պահվում: Այդ փաստաթղթերից տեղեկացա, որ Ամերիկան ժամանակի այդ շրջանում նույնպես սաստել է Թուրքիային: Եւ Թուրքիան չհամարձակվեց առաջանալ, չնայած հարմար առիթ էր: Քելբաջարը Լեռնային ինքնավար մարզի սահմաններից դուրս էր գտնվում: Եւ ներկա իրավիճակում էլ աշխարհի մեծ տերությունները ղարաբաղյան հարցի լուծման միակ ուղին բանակցային խաղաղ եղանակն է համարում:

**- Նույն այդ երկրները գիտեն նաեւ, որ Արեւմտյան Հայաստանում թուրքերը Ցեղասպանություն են իրականացրել, բայց եւ հանդարտ հանդուրժողականությամբ են վերաբերվում իրենց իսկ երկրների բարձր ամբիոններից՝ Հայաստանի ու հայերի հանդեպ հնչեցրած Թուրքիայի վարչապետի ու նախագահի՝ Հայոց սպանդը մերժող հայտարարություններին եւ հայերի հասցեին հնչեցրած մեղադրանքներին:**

- Ես հիմա ավարտում եմ նոր մի աշխատություն, որ կոչվում է «Ցեղասպանությունը որպես հայկական «հարցի լուծման» օսմանյան մոդել. դահիճ եւ զոհ»: Այս գրքում առաջ եմ քաշում մի քանի հիմնադրույթներ: Նախ, որոշ հղումներով ու մեկնաբանություններով անդրադարձել եմ Ռաֆայել Լեմկինի աշխատություններին: Լեմկինը Լեհաստանում ծնված հրեա իրավաբան էր, որն իր գենոցիդ եզրը եւ «ցեղասպանություն» ձեւակերպումը, որպես երեւույթի սահմանում, տվել է 1920-30 թվականներին՝ Հայոց եղեռնի նյութերի ուսումնասիրությունների հիմքով: Լեմկինի ինքնակենսագրությունից հայտնի է, որ 1926-ին, Լվովի համալսարանում սովորելու ժամանակ մարդկային ոճրագործությունների շարքում հայոց ողբերգության վերաբերյալ նյութերին ծանոթանալով, նա ոչ միայն բարձրաձայնել է այդ մասին, այլեւ փորձել է հարցը մտցնել Ազգերի Լիգայի նիստեր՝ հայկական ջարդերը որակելով որպես բարբարոսություն, որպես վանդալիզմ եւ մեծագույն հանցանք, առհասարակ մարդկության դեմ գործված: Եթե այս տեսադրույթը չսահմանվեր եւ շրջանառության մեջ չդրվեր, Հայոց դատն այսպիսի լայն շառավղով չէր քննարկվի: Եւ հիմա աշխարհը հենց այս շեշտադրման համար է մեզ թիկունք կանգնում: Սա է, որ գրքի առանցքն եմ դարձրել: Հայոց ցեղասպանությունը ճանաչված է, թե՞ ոչ,- հարցին ես գրավոր շարադրանքով պատասխանում եմ. Այո՛ ճանաչված է եւ դասվում է մարդկության դեմ գործած մեծագույն ոճրագործությունների շարքին: Ո՞րն է այն չափորոշիչը, որը մատնանշելով, կարելի է նշել, թե սա կասկածի ենթակա պատասխան չէ: Իսկ ես հակադարձելով, հարց եմ տալիս, արդյո՞ք դա պետք է հաստատվի ՄԱԿ-ի անդամ բոլոր՝ 193 պետությունների ճանաչումից հետո: Անհնար է: Աշխարհում այդպիսի օրինակ չկա:

**- Իսկ հրեաների Հոլոքո՞սթը:**

- Հրեաները բացառություն են կազմում, քանի որ Հոլոքոսթի ճանաչման հարցը համընկավ ֆաշիստական Գերմանիայի լիդերների Նյուրենբերգյան դատավարության հետ եւ այն համահունչ ընթացք ունեցավ: Այսինքն, դատավարությունը գնում էր երկրորդ համաշխարհային պատերազմը հրահրողների եւ իրականացնողների դեմ, որոնց գործած չարագործությունների շարքում դասվեց նաեւ Հոլոքոսթը: Այդ պատճառով էլ Հոլոքոսթը մնաց միակը, որը ճանաչեց միջազգային տրիբունալը: Ես իմ գրքում գրում եմ նաեւ, որ բնավ էլ կարեւոր չէ, որ Ամերիկան ճանաչի Հայոց ցեղասպանությունը: Կարեւորն այն է, որ գործված ոճրագործության փաստն ընդունի հենց ինքը՝ Թուրքիան: Թեեւ Իսրայելի ցեղասպանագիտական ինստիտուտի տնօրեն Իսրայել Չարնին ինձ ասում էր. «Եթե Ամերիկան ճանաչի Հայոց եղեռնը, հաջորդ օրն իսկ ամբողջ աշխարհը նույնը կանի»: Բայց իրադարձությունների ներկա ընթացքը ցույց է տալիս, որ Թուրքիան կարեւորում, բայց չի ենթարկվում Ամերիկային:

**- Բայց կարծես եւ բոլոր լծակներն օգտագործում է, որպեսզի Միացյալ Նահանգներում սկսված գործընթացը կասեցվի:**

- Վախենում է, այո՛, բայց մյուս կողմից էլ չի հայտարարում, թե Ամերիկայի հաստատումից հետո ինքն էլ կընդունի 95 տարի առաջ իր նախնիների գործած մեղքը: Բայց մինչեւ երբ կարո՞ղ է հերքել այն բոլոր հայտարարություններն, ըստ որոնց էխան պետություն, էխան երկրի պառլամենտս, էխան միջազգային կազմակերպություն համոզված հաստատում են, այո՛ 1915 թվականին հայերի հետ կատարվածը Ցեղասպանություն է, որի համար պատասխանատու է երիտթուրքերի կառավարությունը եւ Թուրքիան պետք է ընդունի իր մեղքը ու ներողություն խնդրի հայությունից:

**- Իսկ եթե հանկարծ Թուրքիան ճանաչի Հայոց ցեղասպանությունը, մեր հաջորդ քայլը ո՞րն է լինելու, մենք ունե՞նք հետագա գործողությունների մշակված ծրագիր:**

- Մշակված ծրագիր չկա: Կան առանձին կուսակցությունների, ազգային գործիչների, գիտնականների տեսակետներ: Հիմա խոսում են հատուցման հարցի մասին: Պատմաբանների մի խումբ եւ հատկապես ՀՅԴ-ն, ակտիվորեն պնդում են, որ ճանաչման հետ նաեւ հատուցման հարցը պետք է դրվի: Թուրքիան դրանից է վախենում, վախենում է հայերի հետագա քայլերից, վախենում է, որ հայերը տարածքային պահանջներ կներկայացնեն: Հիմնականում դրա համար են դիմադրում, քանի որ չեն կարող ճանաչել եւ ասել, թե Ձեր հողերը ես չենք տալիս: Բայց կրկին չմոռանանք քաղաքական շահերի գործոնը: Եթե Թուրքիան իրականացներ Դարֆուրի ցեղասպանությունը, ապա այն հազիվ թե ճանաչեին: Ի դեպ, ցեղասպանությունների ուսումնասիրման միջազգային ասոցիացիա կա, որի անդամ եմ նաեւ ես: Ասոցիացիան, 2005-ին, երեւանյան հայտնի գիտաժողովից հետո Ֆլորիդայում (ԱՄՆ) կազմակերպել էր համանման մի կոնֆերանս, որի խորագիրն էր՝ «Հայկական ցեղասպանությունից 90 տարի եւ Հոլոքոսթից 60 տարի անց»: Այնտեղ հավաքվել էր աշխարհի մասնագետների սերուցքը, որի ներկայությունն արդեն իսկ առաջին Ցեղասպանության փաստի հաստատում էր նշանակում: Ի դեպ, գիտաժողովում քննարկվող խնդիրներից մեկն էլ ժխտման հարցն էր: Նիստն ընթանում էր լեփ-լեցուն դահլիճում եւ այն շատ փայլուն վարում էր թուրք հայտնի պատմաբան Թաներ Աքչամը: Թեման արծարծող տարբեր ելույթներից պարզվեց, որ ըստ էության, չկա մի ցեղասպանություն, այդ շարքում նույնիսկ Հոլոքոսթը, որը ժխտելու փորձեր չեն կատարվել: Գերմանիայի ներկայացուցիչներից մեկը, օրինակ, իր ելույթում ասաց, թե Հոլոքոսթի զոհերի թիվն ուռճացված է, եւ ոչ թե միլիոնավոր, այլ 300-500 հազար հրեա է

AZG NEW PDF.qxd 22/04/2010 21:57 Page 1



ստանվել: Նիստը ամփոփեց Ակչամը, որի խոսքը, պարզապես բանաձեւի ուժ ուներ: Նա ասաց. «Ժխտման ինդուստրիայի հիմնադիրը Թուրքիան է»: Ուրեմն, Հայոց եղեռնը մերժելով, թուրքերը շարունակում են ոճրագործություն կատարել:

**- Եվ ոճրագործության շարունակությունը պահպանողը ժամանակակից Թուրքիայի իշխանավորներն են, որոնք փաստորեն հաստատում են, որ իրենց նախնիների արժանի ժառանգորդն են:**

- Այո, ահա թե ինչու այս ու բազում հիմնավոր փաստերի հիմքով կարելի է ասել, որ Թուրքիայի վիճակը գնալով վատանում է: Թուրքիան մեկուսացվում է: Հիշենք՝ մարտի 4-ին կայացած ամերիկյան կոնգրեսականների նիստը, որտեղ քվեարկությունն անցավ կողմ՝ 23 եւ դեմ՝ 22 ձայների հարաբերությամբ: Ըստ էության, 45 կոնգրեսականներն էլ Հայոց ցեղասպանությանն «այո» են ասել: Քանի որ դեմ քվեարկածներից եւ ոչ մեկը չի կասկածել, չի ասել, թե նման բան չի եղել, հակառակը, դեմ քվեարկողներն էլ ընդունեցին, որ ողբերգությունը կատարվել է, շատերը նույնիսկ վշտակցեցին հայ ժողովրդին, ասացին, թե խոնարհվում են Ցեղասպանության զոհերի հիշատակի առաջ, բայց ելնելով քաղաքական ներկա իրավիճակից, գտնում էին, որ նման հայտարարությամբ հանդես գալու ժամանակը չէ: Այս է, որ հայերը պետք է կարեւորեն: Պետք չէ վիրավորվել կամ նեղացածի կեցվածք ընդունել:

**- Մի ուրիշ փաստից էլ են նեղանում հայերը եւ հատկապես ամերիկաբնակ մեր հայրենակիցները, որոնք ամեն տարի անհամբերությամբ սպասում են, թե ապրիլի 24-ին Ամերիկայի նախագահը կարտաբերի «ցեղասպանություն» բառը, թե՞ ոչ: Հայերը ինչո՞ւ են այդչափ կարեւորում եւ հուսախաբության ծանր պահեր ապրում, երբ Միացյալ Նահանգների նախագահը (նախագահները), ոչ թե սպասված բառը, այլ դրա հոմանիշներն են հնչեցնում:**

- Դրա կարիքը չկա, որովհետեւ միջազգային մասշտաբով Հայոց ցեղասպանությունը ճանաչված է եւ նույնիսկ Ամերիկան է ճանաչել՝ երեք նախագահների մակարդակով: Առաջինը՝ Վուդրո Վիլսոնն էր, որը ցեղասպանություն բառը չօգտագործեց, զուտ այն պատճառով, որ այդ տերմինը դեռեւս շրջանառության մեջ չկար: Դրա փոխարեն նա ծանոթ էր Հենրի Մորգենթաուի գաղտնի փաստաթղթերին, գիտեր հայերին որպես էթնոս բնաջնջելու թուրքերի ծրագրի մասին, եւ նա միակն էր, որին Հայաստանի իրական սահմանները ճանաչելու համար կոչել են «Մեծ Հայաստանի կնքահայր»: Երկրորդը՝ Ջիմի Քարտերն էր, որը 1978-ին հայտարարեց, թե հայերը չունեցան իրենց Նյուրենբերգը: Երրորդը՝ Ռոնալդ Ռեյգանն էր, որը 1981-ի մարտին ասաց. «Հոլոքոսթը չի կարելի մոռանալ, ինչպես չի կարելի մոռանալ դրանից առաջ իրականացված Հայոց ցեղասպանությունը...»: Չմոռանանք նաեւ, որ Ամերիկայի հիսուն նահանգներից 43-ը ճանաչել է Հայոց եղեռնը: Հիշեցնեմ՝ 1954-ին, հիմնված աշխարհի ամենահեղինակավոր՝ ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի՝ 1997-ին եւ 2005-ին ընդունած բանաձեւերի համաձայն, գիտական առումով որեւէ կասկած չի հարուցվում, որ հայերի նկատմամբ իրագործվածը Ցեղասպանություն է: Փաստաթուղթ, որի տակ ստորագրել են 53 Նոբելյան մրցանակակիրներ: Թվարկումը շարունակելու համար միայն ասեմ, որ ես այս նյութը խորքով եւ մանրամասն ուսումնասիրել եւ շարադրել եմ իմ նոր գրքում, որտեղ բազմաթիվ վավերացված՝ հայտնի ու անհայտ օրինակներով հիմնավորում եմ՝ Օսմանյան Թուրքիայի իրականացրած Հայոց ցեղասպանությունը միջազգայնորեն ճանաչված փաստ է: Եւ սա մաքուր ճշմարտություն է:

Հարցազրույցը վարեց
ՌՈՒԶԱՆ ՉԱՔԱՐՅԱՆԸ
*15 ապրիլ, 2010*
*(հապավումներով)*

# Ադրբեջանը պահանջում է ԵԱՀԿ Մինսկի խմբում ընդգրկել Թուրքիային

## *Նրա սանձարձակությունները չափ ու սահման չունեն*

**Ադրբեջանի կամակորություններն ու սանձարձակությունները չափ ու սահման չեն ճանաչում: Մերթ ռազմատենչ հայտարարություններ է անում, թե հայերից զենքի ուժով կվերցնի Լեռնային Ղարաբաղը, մերթ ադրբեջանական, այսպես կոչված, ժողովրդի «պատմական հայրենիքի» տարածք է համարում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարակից շրջանները:**

**Ռազմատենչ հայտարարություններով Ադրբեջանը Հարավային Կովկասում պատերազմի վերսկսման վտանգի մասին է ակնարկում, որ շանտաժի ենթարկի ինչպես միջազգային հանրությանը, այնպես էլ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրներին: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարակից շրջանները համարելով պատմական ադրբեջանական տարածք, նա փորձում է իրավական հիմք հաղորդել սեփական շանտաժին՝ մոռանալով, որ Մինսկի խմբի համանախագահող ԱՄՆ-ն, Ֆրանսիան եւ Ռուսաստանը միջազգային ուժեր են, հետեւաբար շանտաժի չեն ենթարկվում, այլ... ենթարկում են:**

**Քանի որ նրանց է պատկանում ղարաբաղյան հակամարտության կարգավորման նախաձեռնությունը, իսկ դրա նշանակությունը խիստ կարեւոր է որեւէ տարածաշրջան ազդեցության տակ վերցնելու առումով, ուստի միջազգային այդ ուժերը չեն էլ թողնի, որ մեկ այլ պետություն, առավել եւս մեկ ազգի երկու պետություններից Թուրքիան, միջամտի կարգավորման գործընթացին:**

**Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղն ու հարակից շրջանները «պատմականորեն ադրբեջանական տարածք» համարելու Ադրբեջանի նկրտումներին, ապա պետք է հիշեցնել, որ «պատմական հայրենիքը» յուրահատուկ է պատմություն ունեցող ժողովուրդներին: Ներկայումս ադրբեջանական կոչվող ժողովուրդը պատմություն չունի, եթե չկազմավորվեր Խորհրդային Միությունը, ապա ադրբեջանականի անունն էլ չէր ունենա, որովհետեւ դեռեւս 20-րդ դարի 20-ական թթ. բոլշեւիկյան հեղափոխության առաջնորդ Լենինն ու ԽՍՀՄ-ի հիմնադիրներն այդ ժողովրդին անվանում էին Կովկասի թաթարներ, ինչպես Եվրոպայում: Էլ չենք խոսում Սումգայիթում անպաշտպան կանանց ու երեխաներին սպանող մարդասպան տականքներին «սումգայիթյան հերոսներ», իսկ Ռամիլ Սաֆարով կոչված տսահակին «ազգային հերոս» հռչակելու ադրբեջանցիների առաքինության մասին:**

**Ի դեպ, ժողովուրդը մարդկանց պատմականորեն կազմավորված սոցիալ, էթնիկ ընդհանրությունն է: Նույնիսկ 20-րդ դարի 20-ական թթ. Կովկասի թաթարներ կոչվող ադրբեջանական ընդհանրությանը եթե ժողովուրդ էլ անվանենք, մարդասպան տսահակին «ազգային հերոս» հռչակելու առաքինությամբ նա սիրահոժար նույնանում է բորենիների ոհմակի հետ:**

**Համենայն դեպս երեկ Ադրբեջանը, «հայասանամետ» դիրքորոշման պատճառաբանությամբ կասկածի տակ դնելով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրներից ԱՄՆ-ի անկողմնակալությունը Լեռնային Ղարաբաղի հարցում, հանդես է եկել Թուրքիային Մինսկի խմբում ընդգրկելու առաջարկով: Թուրքական էլեկտրոնային մամուլի վկայությամբ, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի քաղաքական հարցերով խորհրդական Ալի Հասանովը հայտարարել է, որ Թուրքիայի ընդգրկման հարցը Մինսկի խմբի օրակարգում է, քննարկման կդրվի համանախագահող երկրների հայեցողությամբ:**

Հ. ՉԱՔՐՅԱՆ

# Բաքուն կոկա-կոլայով է «սաստում» ԱՄՆ-ին ու խռոված ձեւանում

Ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության հիշատակի օր չէ միայն, այլ վախի ու մեծագույն անհանգստության ու մտավախությունների օր բոլոր նրանց համար, որոնք չեն ընդունում տեղի ունեցածը որպես Ցեղասպանություն ու ամենուր անում են ձեռքից եկածը խոչընդոտելու այն գործընթացներին, որ կապված են ցեղասպանության ճանաչման հետ:

Բնավ էլ պատահական չէ, որ հենց այս օրերին են Բաքվում հիշել երկրում «առողջ մրցակցության» խնդիրներին անդրադառնալու կարեւորության մասին: Հակամենաշնորհային քաղաքականության եւ սպառողների իրավունքների պաշտպանության ադրբեջանական պետական ծառայությունը հենց ապրիլի 24-ին նախորդող ժամանակահատվածում, նաեւ ԱՄՆ կողմից միջուկային անվտանգության գագաթաժողովին մասնակցության հրավեր չստանալուց հետո է միայն փորձում կանոնակարգել հակամենաշնորհային օրենսդրության խախտումների հարցերը ամերիկյան «Կոկա-Կոլա» ընկերության կողմից:

Սրան զուգահեռ, հետաքրքրական է նույն համատեքստի մեջ տեղավորվող եւս մեկ հայտարարություն, որ արել է Ադրբեջանի նախագահի գրասենյակի արտաքին հարաբերությունների բաժնի ղեկավար Նովրուզ Մամեդովը: Ըստ ադրբեջանական կայքէջերի փոխանցման, Մամեդովն, ըստ էության, բարձրաձայնել է ԱՄՆ-ից իր երկրի նեղացած կեցվածքը: Մասնավորապես, նախագահական գրասենյակի արտաքին հարաբերությունների հարցերով ղեկավարը նշել է, թե ԱՄՆ-ը կարող է կորցնել «տարածաշրջանում ամենակարեւոր եւ հուսալի գործընկերոջը՝ Ադրբեջանին»:

Չնայած վերջին ձեւակերպման առնչությամբ Ադրբեջանն ու Վրաստանը միմյանցից առաջ ընկնելու հարցում հայտարարությունների տեքստերը խմբագրելու մեջ չեն թերանում, սակայն առանձնակի տարբերություն չկա, թե նրանցից ո՞րն է իրեն ԱՄՆ-ի «փեշերին» ավելի մոտ համարում: Առավել կարեւոր է, թե ԱՄՆ-ի վարչակազմն ու դրա ներկայացուցիչները մեր տարածաշրջանում քայլեր կատարելիս ինչ շահերից են ելնում, ըստ որի էլ գործընկեր ու կարեւորությամբ արտահայտված ջերմության են արժանանում մեկ այս, մեկ այն երկրի ներկայացուցիչները:

Ամեն դեպքում, սեփական երկրի գործընկերությունը ԱՄՆ-ի համար Մամեդովը կարեւորում է նեղացած կեցվածքի այն պարզաբանմամբ, որ իբր Ադրբեջանի շահերը պաշտպանելու մոտեցումը փոխելու համար Թուրքիայի վրա ճնշումներ գործադրելով ԱՄՆ-ը կարող է «գնալ իր գործընկերոջը կորցնելու ռիսկին»:

Այն, որ ադրբեջանցի չինովնիկը այսօրինակ հայտարարություն կարող է անել, նորությունների ցանկից չէ, սակայն թերեւս առանձնակի զարմանալի չպետք է համարել նաեւ այն, որ, ասենք, Թուրքիայի վրա ճնշումների դեմ «դժգոհող» Ադրբեջանում հպարտորեն են անդրադառնում Հայաստանի շրջափակմանը՝ որպես այլ հարցում ճնշման միջոց: Մամեդովի խոսքերով, հայ-թուրքական սահմանի փակ լինելը պետք է պահպանել, քանի որ «դա Հայաստանի վրա ազդեցության հիմնական միջոցն է ղարաբաղյան հարցում ավելի լուրջ մոտեցման համար»:

Ադրբեջանում, ըստ այդմ, պարզվում է, մինչեւ օրս չեն հասկացել, որ շրջափակումը չի կարող գործոն դառնալ ղարաբաղյան հարցում ու եթե Եվրոպայում կարող են համաձայնել ինչ-որ մոտեցումներին, միայն թե հայտնվեն Եվրոմիությունում, ապա Հայաստանում դժվար թե որեւէ կերպ շրջափակումից ազատվելը իրականացվի ղարաբաղյան հարցի հաշվին, հատկապես որ շրջափակումը չի կարող վաս ազդեցություն ունեցող գնահատվել Հայաստանում որոշում կայացնող օղակներին մոտ գտնվող գործարարության տեսանկյունից:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Իրանի ծովուժի զորավարժանքներ Օրմուզի նեղուցում




**Իրանի իսլամական հեղափոխության կորպուսի գլխավոր հրամանատարի տեղակալ Հոսեյն Սալամին Ասոշիեյթեդ պրես գործակալության թղթակցին հայտնել է, որ ապրիլի 22-ին Օրմուզի նեղուցում սկսվել են իրանական ծովուժի ծավալուն զորավարժություններ: Սալամին չի մանրամասնել, թե ինչպիսի սցենարով են անցկացվում դրանք, սակայն նշել է, որ նպատակներից մեկն է Արեւմուտքին հիշեցնել Իրանի դերը Պարսից ծոցի երկրներից նեղուցով նավթի տարանցման կազմակերպման մեջ:**

**2008-ին Պարսից ծոցում բացվեց Իրանի ծովուժի չորրորդ ռազմակայանը: Ծովափի պաշտպանության ուժեղացումը Իրանի հակազդեցությունն է Արեւմուտքի երկրների հետ հարաբերությունների վատթարացմանը: Այդ երկրների մի մասը չի բացառում Իրանի վրա հարձակվելու հնարավորությունը, եթե նա չհրաժարվի իր միջուկային ծրագրից:**

**Պարսից ծոցի երկրներից նավթի ու նավթամթերքների տեղափոխության գործում Օրմուզի նեղուցն ունի ռազմավարական նշանակություն. այնտեղով է անցնում արտահանման ծավալների մոտ 40 տոկոսը: Նեղուցի հյուսիսային ափը պատկանում է Իրանին, հարավայինը՝ ԱՄԷ-ին եւ Օմանի միջնատարածքին:**

**Իրանի զինվորական հրամանատարությունը քանիցս հայտարարել է, ռազմական հարձակման ենթարկվելու դեպքում իրանցիները նեղուցը փակելով՝ անմատչելի կդարձնեն Պարսից ծոցը:**

# ՌԴ Սեւծովյան նավատորմը կմնա Ղրիմում, իսկ գազի գինը կզեղչվի

## *Մեդվեդեւ-Յանուկովիչ հանդիպում*

ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւը եւ Ուկրաինայի նախագահ Վիկտոր Յանուկովիչը Խարկովում համաձայնագիր են ստորագրել ՌԴ Սեւծովյան նավատորմի վերաբերյալ: Փաստաթղթով նախատեսվում է Ղրիմում ռուսաստանցի նավաստիների ներկայությունը երկարաձգել 25 տարով: Այդ մասին հաղորդում է Ինտերֆաքս գործակալությունը, վկայակոչելով բանակցությունների ավարտից հետո Մեդվեդեւի արած հայտարարությունը:

Նկատի ունենալով, որ Ուկրաինայի նախկին ղեկավարության հետ 1997 թ. ստորագրված փաստաթղթում Սեւծովյան նավատորմի ներկայության ժամկետն ավարտվում է 2014-ին, ռուսական նավատորմը նոր համաձայնագրի շնորհիվ Ղրիմում կմնա մինչեւ 2042 թվականը:



Մեդվեդեւի խոսքերով, փաստաթղթի գործողության ժամկետը կարող է երկարաձգվել եւս 5 տարով: Բացի դրանից, ապրիլի 21-ին ստորագրվել է ռուս-ուկրաինական պայմանագիր գազի վերաբերյալ: Պայմանագիրը 30 տոկոս զեղչ է նախատեսում Ուկրաինային մատակարարվող ռուսական գազի համար:

ՌԴ նախագահը հայտարարել է, որ Սեւծովյան նավատորմի եւ գազի վաճառքի պայմանագրերը տեխնիկապես փոխկապակցված են: Մեդվեդեւը պարզաբանել է, որ նավատորմի ռազմակայանի վարձակալման թանկացումը համապատասխանում է գազի զեղչումից գոյացող գումարին, որը հաշվի կառնվի որպես Ղրիմում Սեւծովյան նավատորմի ներկայության վարձավճարի մի մաս: Տարեկան վարձավճարն առայժմ 98 մլն դոլար է:

AZG NEW PDF.qxd 22/04/2010 21:56 Page 1





# Ծիծեռնակաբերդի «Հիշողության պուրակը»




Ապրիլի 22-ը միջազգայնորեն նշվում է որպես Երկրի օր: Այս տարի լրանում է տոնի 40-ամյակը, որին է նվիրված ՀՀ վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի «Կանաչ սերունդ-2010» քարոզարշավը: Ծրագրի գլխավոր իրադարձությունը «Հիշողության պուրակի» հիմնադրումն էր Ծիծեռնակաբերդի բարձունքում՝ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հարակից այգում, ինչն իրողություն դարձավ երեկ, առավոտյան: Հիմնադրամի նախաձեռնությամբ Արեւմտյան Հայաստանից բերված 95 տնկիներով պուրակը հայոց վաղեմի տեսլականի՝ միասնական հայրենիքի գաղափարի մի յուրատեսակ խորհրդանիշ է դառնալու՝ «հայացքը» միաժամանակ թե՛ անցյալին, թե՛ ապագային հառած. հիշողության միջով ապրել հուսալի ապագա ապահովող ներկան: Աշխատելու, արարելու մի բանաձեւ, ինչը հատուկ ընդգծեց իր խոսքում Ռալֆ Յիրիկյանը, որի ղեկավարած «Վիվասել-ՄՏՍ» ընկերությունը հիմնադրամի գլխավոր հովանավորն է՝ նրա բոլոր ծրագրերի հավատացողն ու աջակցողը: Խորհրդանշական եւ շատ ազնիվ գաղափար կրող «Հիշողության պուրակը» հիմնադրամի՝ 1915-ի զոհերի հիշատակի խոնարհման տուրքն է Հայոց եղեռնի 95-րդ տարելիցի առիթով:

Ծառատունկն ուղեկցվեց հոգեւոր արարողությամբ, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ արք. Կճոյանի օրհնությամբ: Արարողության ողջ ընթացքը գեղեցկորեն զարդարեց «Ծաղկազարդ» երգչախմբի կոմիտասյան հրաշալի երգեցողությունը:

Ազգային ինքնության, սեփական արմատների գիտակցության արժանապատվությամբ շեն պահել, ծաղկեցնել այն հողը, որն այսօր այդ ինքնության՝ հայության, միակ հայրենիքն է. ահա այն հիմնական պատգամը, որ խոր լռության միջից աղաղակում են հայոց նահատակները..., Ծիծեռնակաբերդի հուշակոթողի երկնաձիգ քարերը, ծառերը, խոտը... Եվ հենց այս խորհրդի մասին էր, ըստ էության, պուրակի բացմանը ելույթ ունեցողների՝ Ռալֆ Յիրիկյանի, Հայկ Դեմոյանի, Ռուբեն Խաչատրյանի խոսքն ու դրան ուղղված նրանց գործը:

Պատմական հայրենիքից բերված 95 տնկիները սպասում էին մայր հողին միանալու իրենց պահին, նրանցից յուրաքանչյուրն իր «անվանակիցն» ունեցավ. նախապես ընտրված պետական-քաղաքական, մշակույթի 95 գործիչներն իրենց ծառերն ունեցան Ծիծեռնակաբերդում: Ցավոք, նրանք ոչ բոլորն էին ներկա, այդ թվում՝ պաշտոնական անձինք:

Հայոց ցեղասպանության ինստիտուտ-թանգարանի հետ համագործակցությամբ հիմնադրամն իրագործելու է բնապահպանական մի շարք ծրագրեր: Մեծ եղեռնի 95-րդ տարելիցի առիթով հիմնադրամը երեկ թանգարանին նվիրեց արժեքավոր գրականություն, մեծ մասն օտար հեղինակների փաստագրական վկայություններ, դրանցից երեքը կարեւոր գրքեր են՝ ձեռք բերված Միացյալ Նահանգներում, Ռալֆ Յիրիկյանի աջակցությամբ: Գրքերի հանձնման արարողությունը տեղի ունեցավ թանգարանի Կոմիտասի անվան սրահում:

Այդ ծրագրի հաջորդ փուլը բացառիկ մտահղացում է, եզակի եւ ինքնատիպ՝ թե՛ խորհրդանշական, թե՛ օգտակարության առումով: Հուշարձանի կրակի շուրջը դրվելիք ծաղիկները ապրիլի 24-ից օրեր անց ոչ թե դեն կնետվեն, այլ կօգտագործվեն ի պետս, դրանց մի մասը՝ ցողունները, կդառնան պարարտանյութ, իսկ գլխիկները՝ բացիկների, հուշագրերի զարդամոտիվներ, եւ սա՝ արեւորդիների ջանքերով:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

*Հ. Գ. - Երեկվա ծառատունկը հրաշալի առիթ էր մեր արժանավոր նախորդների անուններով ծառերի պուրակ ունենալ. գուցե սա հաջո՞րդ անգամ:*

# Հայի զենքը անպարտ է

**Հայոց մեծ եղեռնի 95-րդ տարելիցի նախօրեին Երեւանի քաղաքապետարանի «Երեւանի պատմության թանգարանում», ՀՀ սփյուռքի նախարարության, քաղաքապետարանի հետ համատեղ եւ Ռուսաստանի հայերի միության աջակցությամբ բացվեց «Ո՛չ Ցեղասպանությանը» խորագիրը կրող կերպարվեստի ցուցահանդեսը: Բացման խոսքով ելույթ ունեցավ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը: Համահայկական անդրանիկ ցուցահանդեսով բացվեց «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական փառատոնը: Ցուցահանդեսին ներկայացված կերպարվեստի 60 գործերը ներկայացնում էին Հայաստանի, ԱՄՆ-ի, Կանադայի, Ֆրանսիայի, Լիբանանի, Սիրիայի, Վրաստանի եւ Արցախի նկարիչների ու քանդակագործների ստեղծագործությունները: Նախարարը շնորհակալություն հայտնեց այն երկրների ստեղծագործողներին, որոնք իրենց աշխատանքներով միացել էին «Ո՛չ Ցեղասպանությանը» խորագրով ցուցահանդեսին:**



Երեւանի պատմության թանգարանի տնօրեն **Արմինե Սարգսյանը** ցուցահանդես այցելածներին պարզաբանումներ տվեց, որ առաջին անգամ թանգարանը այս ցուցահանդեսին ներկայացրել է հազվագյուտ 30 լուսանկարներ, որոնք արվել են Մեծ եղեռնից մեկ տարի հետո Երեւանում, Էջմիածնում եւ Դիլիջանում բացված մանկատներում:

Բազմամարդ այդ հուզիչ ցուցահանդեսում առանձնանում էր 4-ամյա **Գագիկը,** որը չհասկանալով, սակայն կլանված ու զարմանքով դիտում էր անգամ սահմռկեցուցիչ պահերով կտավները: Կգա նաեւ Գագիկի ժամանակը ու նա իր հասակակիցների հետ կշարունակի պահանջատիրական այն գործընթացը, որ սկսել են իրենից տարիքով մեծերը ու քաղաքական գործիչները:

## Քաղաքապետարանը ամբողջ տարվա ընթացքում կանդրադառնա Հայոց մեծ եղեռնին

Ցուցահանդեսի ընթացքում քաղաքապետ **Գագիկ Բեգլարյանը «Ազգի»** հետ զրույցում դատապարտելով Ցեղասպանությունը ասաց. «Այս տարի մենք նշում ենք Հայոց մեծ եղեռնի 95-ամյա տարելիցը, որը մեր նորագույն պատմության ամենաճակատագրական դրվագը դարձավ՝ դաժան կերպով խմբագրելով 20-րդ դար մտած հայ ժողովրդի ազգային զարգացման ծրագրերը:

Մեր ժողովրդի նկատմամբ իր սեփական հայրենիքում Օսմանյան կայսրության կողմից իրականացված ցեղասպանությունը հետապնդում էր հաշվարկված քաղաքական նպատակներ:

Թուրքական այսօրվա պետությունը նաեւ Ցեղասպանության արդյունք է: Թուրքիային միայն այդ ճանապարհով հաջողվեց ընդամենը տարածքի վերածել հայերի բազմադարյան հայրենիքը եւ վերջնականորեն սեփականել այն: Արդյունքում ժամանակին իր մշակույթով եւ կրթությամբ նշանավոր կայսրության այդ հատվածը վերածվել է թույլ եւ հետամնաց ծայրամասի:

Ցեղասպանության ճանաչման պահանջատիրությունը ամենեւին էլ հակամարտության կոչ չէ, այլ ընդամենը պատմական ճշմարտության վերականգնման պահանջ:

Չդատապարտված հանցանքը, ինչպես պատմությունն է վկայում, նոր հանցանք է ծնում: Ցեղասպանության դատապարտումը պետք է ոչ միայն մեզ՝ հայերիս, այլ առաջադեմ ողջ մարդկությանը»:

Պրն Բեգլարյանը նշեց, որ քաղաքապետարանի վարչությունները ամբողջ տարվա ընթացքում կիրականացնեն միջոցառումների լայն ծրագիր, որը նվիրվելու է Հայոց եղեռնի 95-ամյակին:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

# Սերգեյ Գորոդեցկի. «Չեմ մոռանա Հայաստանը երբեք...»

Երեկ Թեքեյան կենտրոնում տեղի ունեցավ հայ ժողովրդի մեծ բարեկամ, ռուս գրող, բանաստեղծ Սերգեյ Գորոդեցկու «Վերջին ճիչը» գրքի հայերեն եւ ռուսերեն տարբերակների շնորհանդեսը՝ նվիրված Մեծ եղեռնի 95-րդ տարելիցին: Միջոցառման կազմակերպիչներն էին Հայաստանի Թեքեյան մշակութային միությունը եւ «Լոռվա ձոր» հայրենակցական միությունը: Հայերեն հրատարակության մեջ առաջին անգամ հայերեն տպագրվել են Ս. Գորոդեցկու «Շամիրամի այգիները» վեպն ամբողջությամբ, նրա ակնարկներն ու հոդվածները: Գրքում առաջին անգամ ներկայացվել են Ս. Գորոդեցկու օրագրից դրվագներ, ինչպես նաեւ հեղինակի որոշ ճեպանկարները, որոնք նա արել է Արեւմտյան Հայաստանում:

Գրքի ե՛ւ հայերեն, ե՛ւ ռուսերեն տարբերակները հրատարակվել են «Լոռվա ձոր» միության նախաձեռնությամբ ու աջակցությամբ:

«Այս հրատարակությունը հարգանքի տուրք է Մեծ եղեռնի զոհերի հիշատակին, քանի որ գրքի առանցքը հենց դարասկզբի իրադարձություններն են, որոնց ականատեսն է եղել Սերգեյ Գորոդեցկին», նշեց «Լոռվա ձոր» միության նախագահ **Սերոբ Երիցյանը**:




1916 թվականին Գորոդեցկին լինում է Թբիլիսիում որպես «Ռուսաց խոսք» թերթի թղթակից: Այստեղ նա հանդիպում է Հովհաննես Թումանյանին, այդ հանդիպումը ճակատագրական է լինում Գորոդեցկու համար: Թումանյանի խորհրդով նա մեկնում է Արեւմտյան Հայաստան՝ ինչպես Թումանյանն է ասել «հայ երեխաներին փրկելու նպատակով»:

Այն, ինչ Գորոդեցկին տեսնում է Արեւմտյան Հայաստանում խորապես ցնցում է նրան՝ արյուն, ավերածություններ: Այդ ամենի մասին նա գրում է օրագրում, որի հենքի վրա էլ գրում է ակնարկների ու հոդվածների շարք՝ ստեղծելով այդ դաժան օրերի տարեգրությունը: Նվարդ Թումանյանին ուղղված իր նամակում նա գրել է. «Հեքիաթների երկիրը վերածվել է արյան երկրի»:

«Հ. Թումանյանի զավակը, ով զոհվեց Վանի ինքնապաշտպանական մարտերում, եղել է Սերգեյ Գորոդեցկու մտերիմ ընկերը, հենց այդ ընկերությունով էլ դրվել է Թումանյանական գերդաստանի եւ Սերգեյ Գորոդեցկու բարեկամության սկիզբը», ասաց Սերոբ Երիցյանը:

«Վերջին ճիչը» գրքի հրատարակման գործում մեծ ներդրում ունի նաեւ Հ. Թումանյանի թոռնուհին՝ Իրմա Սաֆրազբեկյանը, ինչպես նաեւ Թումանյանի ծոռները՝ Արեգ Թոթոյանն ու Ռուբեն Քանքանյանը, ովքեր հովանավորել են գրքի տպագրումը:

«Շատերն էին խոսում հայ ժողովրդի ցավի մասին, սակայն Գորոդեցկին այն հազվագյուտ մարդկանցից էր, որ կիսեց մեր ազգի վիշտը, այդ օրերին նա կանգնեց հայերի կողքին: Գորոդեցկին նաեւ սովորում էր հայերեն, նրա ծոցատետրում գրված է եղել հայերեն այբուբենը», ասաց **Իրմա Սաֆրազբեկյանը**:

Ս. Գորոդեցկին գրել է թուրքերի անսահման դաժանությունների մասին: Ըստ նրա՝ Արեւմտյան Հայաստանում թռչունները մահացած հայ կանանց ու աղջիկների մազերից բներ էին հյուսում: Բանաստեղծը վրդովված էր, որ Եվրոպական պետությունները, տեսնելով՝ ինչպես է կոտորվում հայ ժողովուրդը, ոչինչ չէին անում:

«Գորոդեցկին դիմեց բոլոր պետություններին, որպեսզի վերջիններս բաց անեն իրենց աչքերն ու տեսնեն Մեծ Եղեռնը, եւ առաջինը նա դիմեց Ցարական Ռուսաստանին: Ռուս բանաստեղծը ոչ միայն տարեգրել է դարասկզբի դաժան իրադարձությունները, այլեւ պայքարել է դրանց դեմ», նշեց արձակագիր **Վանուշ Շերմազանյանը:**

«Վերջին ճիչը» գրքում հավաքված են հեղինակի այն բոլոր ստեղծագործությունները, որոնք որեւէ առնչություն ունեն Հայաստանի հետ՝ բանաստեղծություններ, ակնարկներ, հոդվածներ եւ այլն:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Բանաստեղծության տող՝ վերքի նման մերկ. Անատոլի Հովհաննիսյանի գրքում

Ամեն տարի տպագրվող հարյուրավոր գրքերի մեջ երբեմն դժվար է գտնել ընթերցվող արձակ կամ սրտամոտ պոեզիա՝ իսկական գրականության դրոշմն ունեցող այն գործերը, որոնք մարդուն կկտրեն գորշ առօրյայից եւ արվեստի ուժով կպահեն նրան տողի ու գրքի տիրույթներում: Հիմա գիրք է տպում ավելի շատ նա, ով փող ունի, այնպես որ զարմանալի չէ բանաստեղծ Անատոլի Հովհաննիսյանի առաջին եւ երկրորդ գրքերի միջեւ ընկած տասնամյակը՝ «Տաք երկիրը» տպագրվել է 2000 թվականին, իսկ «Հայելին» 2010-ին՝ վերջերս: Իսկ սրտամոտ եւ օրերի տենդն իրենց մեջ կրող բանաստեղծությունները էներգիա են կուտակել այդ տաս տարում եւ ցայտում են «Հայելիի» էջերից.

**Բանաստեղծության տող՝**
**Վերքի նման մերկ,**
**Ես նայում եմ հայելում՝ քեզ,**
**Չկարողանալով փախչել**
**Եւ չկարողանալով չնայել...**



Մնացյալը՝ նոր լույս աշխարհ եկած «Հայելի» բանաստեղծական ժողովածուում:

Ս. Խ.

# Մրցաշարի մեկնարկը հետաձգվեց մեկ օրով

Սոֆիայում տեղի ունեցավ աշխարհի առաջնության Անանդ-Թոփալով շախմատային մրցախաղի բացման հանդիսավոր արարողությունը: Վիճակահանությամբ առաջին պարտիայում սպիտակներով կխաղա աշխարհի չեմպիոնի թագի հավակնորդ, բուլղարացի գրոսմայստեր Վեսելին Թոփալովը: Քանի որ Իսլանդիայում ժայթքած հրաբխի պատճառով Անանդը Գերմանիայից մեքենայով էր ժամանել Սոֆիա եւ բավական հոգնած էր, ուստի մրցաշարի կազմկոմիտեն որոշել է մեկ օրով հետաձգել առաջին պարտիայի անցկացման ժամկետը: Այնպես որ, մրցաշարը կմեկնարկի ապրիլի 24-ին:

Բացման արարողությանը ներկա էին նաեւ Բուլղարիայի վարչապետը, կազմկոմիտեի նախագահ Բոյկո Բորիսովն ու ՖԻԴԵ-ի փոխնախագահ Գեորգիոս Մակրոպուլոսը: Այնուհետեւ կայացավ մրցախաղի մասնակիցների մամուլի ասուլիսը:




Աշխարհի չեմպիոնը հայտարարեց, որ Սոֆիա է եկել ոչ թե կռվելու, այլ շախմատ խաղալու համար ու թեեւ չափազանց հոգնել է երկարատեւ ճամփորդությունից հետո, սակայն պատրաստ է պայքարի եւ սպասում է հետաքրքրական մրցաշարի:

«Շնորհակալ եմ իմ հայրենակիցներին երկրի վարչապետի գլխավորությամբ, որ կազմակերպել են այս մրցաշարը: Ցավոք օլիմպիական խաղեր կազմակերպել չենք կարող, բայց շախմատի միջոցով կարող ենք ներկայանալ աշխարհին: Շնորհակալ եմ հովանավորներին: Վերջին 5 տարիներին Անանդի հետ գերիշխում ենք շախմատային աշխարհում: Այս մրցախաղը վաղուց պետք է կայացած լիներ», նշել է Թոփալովը:

Շնորհակալություն հայտնելու առիթ իրոք որ կար: Բուլղարիան միակ երկիրն էր, որը հանձն առավ կազմակերպել այս մրցախաղը՝ առաջարկելով 2 մլն եվրո մրցանակային ընդհանուր հիմնադրամ, որից 1,2 մլն-ը կստանա հաղթողը: Մասնագետների մեծամասնության կարծիքով մայիսին շախմատային աշխարհը նոր արքա կունենա, քանի որ Թոփալովին տան պատերը պետք է օգնեն:

# Ռոբենը հաղթանակ պարգեւեց «Բավարիային»

**«Բավարիայի» եւ «Լիոնի» միջեւ կայացած կիսաեզրափակիչ հանդիպումն էլ աչքի ընկավ պայքարի լարվածությամբ ու քարտերի առատությամբ: Նախ 37-րդ րոպեին խաղադաշտից հեռացվեց «Բավարիայի» հարձակվող Ֆրանկ Ռիբերին: Սակայն 2-րդ խաղակեսի սկզբում խաղադաշտում թվային հավասարակշռությունը վերականգնվեց, երբ կարմիր քարտ ստացավ Ժերեմի Տուլալանը: Հանդիպման ելքը վճռեց դաշտի տերերի խաղացող Արիեն Ռոբենի խփած միակ գնդակը:**




**Թիմերի մարզիչների կարծիքն այսպիսին էր:**

**Լուի վան Գալ («Բավարիա»)-Շատ գոհ եմ: Այսօր ողջ Եվրոպային ցույց տվեցինք, թե որքան ուժեղ ենք: Նույնիսկ 10 հոգով մենք մեր կամքն էինք թելադրում մրցակցին: Ֆրանկ Ռիբերիի հեռացումից հետո չէի հավատում, որ կհաղթենք: Իսկ երբ խաղադաշտում թվային հավասարակշռությունը վերականգնվեց, փոխարինման դուրս բերեցի Մարիո Գոմեսին, որպեսզի գոլ խփենք: Ճիշտ է, մի շարք գոլային պահերից միայն մեկն օգտագործեցինք: Սովորաբար մրցակցի դաշտում գոլ խփելը մեզ համար խնդիր չէ: Եթե հաջողվի Լիոնում գոլ խփել, ապա դաշտի տերերը ստիպված կլինեն երեք անգամ գրավել մեր դարպասը:**

**Կլոդ Պյուել («Լիոն»)-Առաջին խաղը շատ ծանր ստացվեց: Մենք համառ պայքար մղեցինք, սակայն չկարողացանք գոլային շատ պահեր ստեղծել: Ռիբերիի հեռացումից հետո չկարողացանք օգտվել ստեղծված իրադրությունից: Իսկ Տուլալանի հեռացումից հետո կրկին մեր վիճակը ծանրացավ: «Բավարիան» հենց խաղասկզբից մամլիչ գործողությունների էր դիմել եւ վերահսկում էր խաղի ընթացքը: Ճիշտ է, մենք պարտվեցինք, սակայն դեռ ոչինչ որոշված չէ:**

# Մուտուն որակազրկվեց 9 ամսով

**Իտալիայի օլիմպիական կոմիտեն «Ֆիորենտինայի» ռումինացի հարձակվող Ադրիան Մուտուին որակազրկել է 9 ամսով: Վերջինս կարող է խաղադաշտ դուրս գալ հոկտեմբերի 29-ից ոչ շուտ: Պատճառն այն է, որ հունվարի 10-ին դոպինգ ստուգումը դրական արդյունք է տվել:**

**Մուտուն դժգոհ է վճռից, գտնելով, որ իր նկատմամբ շատ խիստ են վարվել: Ֆուտբոլիստի փաստաբանը չի բացառում, որ բողոք կներկայացնեն Լոզանի մարզական իրավարար դատարան: Նշենք, որ սա արգելված խթանիչների օգտագործման պատճառով Մուտուի առաջին որակազրկումը չէ: 2004-ին հանդես գալով Լոնդոնի «Չելսիում», Մուտուն կոկաինի օգտագործման համար որակազրկվել էր 7 ամսով, իսկ ակումբը չեղյալ էր համարել նրա հետ կնքած պայմանագիրը:**

# Կլիչկոյից պահանջում են դոպինգ ստուգման ենթարկվել

Ռուսաստանցի բռնցքամարտիկ Ալեքսանդր Պովետկինի մենեջեր Վլադիմիր Խրյունովը տեղեկացրել է, որ առայժմ ոչ մի բանակցություն չի վարվում IBF-ի եւ WBO-ի վարկածներով գերծանր քաշային կարգի աշխարհի ներկայիս չեմպիոն Վլադիմիր Կլիչկոյի հետ մենամարտի կազմակերպման հարցում: Խրյունովը նաեւ պատմել է, թե ինչպիսի դժվարություններ կան մենամարտի կազմակերպման հարցում: Դրանք հիմնականում տեխնիկական են: Բանն այն է, որ Պովետկինը հայտարարագիր է ստորագրել, որով պարտավորվում է հակադոպինգային գործակալության կանոններով դոպինգ ստուգման ենթարկվել: Ըստ Խրյունովի, իրենք Կլիչկոյից պահանջում են նույն կերպ վարվել եւ հետեւել Պովետկինի օրինակին:

# Ճապոնացի ֆուտբոլիստները թթվածնային դիմակներ կկրեն

Ֆուտբոլի Ճապոնիայի հավաքականի գլխավոր մարզիչ Տակեսի Օկադան իր ֆուտբոլիստներին աշխարհի առաջնությանը կնախապատրաստի թթվածնային դիմակներով, որոնք կօգնեն բարձրլեռնային պայմաններում նրանց կլիմայափոխմանը: Նա ֆուտբոլիստներին խնդրելու է թթվածնային դիմակներն օգտագործել ամեն օր, նույնիսկ հեռուստացույց դիտելիս:

Թթվածնային դիմակների դերը դժվար է թերագնահատել: Դրանց շնորհիվ կարելի է սրտերի, ճառագայթման, թունավոր արտանետումների, ծխելու վտանգավոր ներգործությունը հասցնել նվազագույնի՝ ժամանակ առ ժամանակ թարմ թթվածին շնչելով: Այն օգտակար է ավելորդ քաշից ազատվելու համար, ինչպես նաեւ բարելավում է մաշկի գույնը:

# Մրցանակային հիմնադրամն աճում է

Այս տարվա թենիսի Ուիմբլդոնի մրցաշարի կանանց եւ տղամարդկանց մենախաղերի հաղթողները 1 մլն ֆունտ ստեռլինգ կստանան: Դա 150 հազարով ավելի է նախորդ տարվա պարգեւավճարից: 10 տարի առաջ այդ գումարը 500 հազար ֆունտ ստեռլինգ էր:

Մրցաշարի մրցանակային ընդհանուր հիմնադրամը 13,725 մլն ֆունտ ստեռլինգ է, ինչը 1,175 մլն-ով գերազանցում է նախորդ տարվա գումարը: Այն թենիսիստները, ովքեր կպարտվեն եզրափակիչում, որպես սփոփանք 500 հազարական ֆունտ ստեռլինգ կստանան:

## ՉՅՈՒԴՈ

# Հաղթական մեկնարկ

**Հայաստանցի 3 ձյուդոյիստներ են մասնակցում Վիեննայում մեկնարկող ձյուդոյի Եվրոպայի առաջնությանը: Տատամի դուրս կգան Եվրոպայի առաջնությունների բազմակի մրցանակակիր, գյումրեցի Հովհաննես Դավթյանը (60 կգ), Եվրոպայի նախկին չեմպիոն, աշխարհի գավաթի այս տարվա խաղարկության 1-ին փուլի հաղթող, հրազդանցի Արմեն Նազարյանը (66 կգ) եւ 2009-ի Եվրոպայի երիտասարդների չեմպիոն, գյումրեցի Արտյոմ Բաղդասարյանը (73 կգ):**

**Մեր երկու ձյուդոյիստների մեկնարկը հաջող էր: Հովհաննես Դավթյանը պայքարից դուրս է մղել շվեդ ձյուդոյիստ Օլե Սունդստրյոմին եւ մոլդովացի Օկտավիան Նակուին: Նրա հաջորդ մրցակիցը կլինի ռուսաստանցի Բեսլան Մուդրանովը:**

**Երկու հաղթանակով մեկնարկեց նաեւ Արմեն Նազարյանը: Առաջին գոտեմարտում Արմենը հաղթեց բուլղարացի Մարտին Իվանովին, ապա պարտության մատնեց վրացի Շալվա Կարդավային: Արմենի հաջորդ մրցակիցն իտալացի Սուգոյ Ուրիարտեն է:**

# Հայ մարմնամարզիկները հասան մրցավայր

Մարմնամարզության տղամարդկանց Հայաստանի հավաքականին վերջապես հաջողվեց մեկնել անգլիական Բիրմինգհեմ քաղաք, որտեղ մեկնարկում է այդ մարզաձեւի Եվրոպայի առաջնությունը: Մեր մարզիկները մրցավայր են ուղեւորվել Երեւան-Լոնդոն չվերթով:

Մեծահասակների մրցումներում Հայաստանը կներկայացնի Վահագն Դավթյանը, որը հանդես կգա օղակների վրա: Բազմամարտի ծրագրով երիտասարդական առաջնությունում մրցավեճի կբռնվեն Արթուր Դավթյանը եւ Վահան Վարդանյանը: Վերջինս կպայքարի նաեւ Սինգապուրում կայանալիք պատանեկան առաջին օլիմպիադայի ուղեգրերի համար: Հայաստանի հավաքականի մարզիչն է Պավել Քարտաշյանը, պատվիրակության ղեկավարը՝ մարմնամարզության Հայաստանի ֆեդերացիայի փոխնախագահ Արմեն Զալիբեկյանը:

# Առաջատարների խմբում նեղվածք է

**Ֆրանսիայի Մալակոֆ քաղաքում ընթացող շախմատի մրցաշարի 6-րդ տուրը հաջող էր առաջատարների շարքերում գտնվող Գրիգոր-Սեւակ Մխիթարյանի եւ Վալենտին Փամբուկչյանի համար, որոնք հաղթելով համապատասխանաբար Վլադիմիր Դյորդեւիչին եւ Ժակ Գաուերին, վաստակեցին 4-ական միավոր:**

**3-ական միավոր ունեն Ռուդոլֆ Գրիգորյանն ու Վարդան Չմշկյանը: Ռուդոլֆը ոչ-ոքի խաղաց Ժոել Կլեմենտի հետ, իսկ Վարդանը հաղթեց Պիեռ Լաուրենտին: Կլոդ Ադամյանը պարտության մատնելով Ժակ Բորովսկուն, վաստակեց 2,5 միավոր: Ալբերտ Լիսայանը վաստակել է 2 միավոր:**

**Աղյուսակը 5-ական միավորով գլխավորում են Ալբերտո Դավիդը, Մաթեյ Կորնետը, Նամիգ Գուլիեւը, Անդրե Դիամանտը, Ֆաբիեն Գուիլեուքսը եւ Պաուլին Գուիարդը:**

# «Մանչեսթր Յունայթեդն» ամենահարուստ ակումբն է

Ամերիկյան «Ֆորբս» ամսագրի տվյալներով, անգլիական «Մանչեսթր Յունայթեդը» 6-րդ տարին անընդմեջ աշխարհի ամենահարուստ ակումբն է: 2008/2009-ի մրցաշրջանում ակումբի ընդհանուր եկամուտը կազմել է 1,835 մլրդ դոլար: Միեւնույն ժամանակ ակումբի ներկայիս պարտքը 1,1 մլրդ դոլար է:

Եկամուտների քանակով 2-րդ տեղում Մադրիդի «Ռեալն» է՝ 1,323 մլրդ դոլար: Լավագույն տասնյակում են նաեւ «Արսենալը» (1,181 մլրդ), «Բարսելոնը» (1 մլրդ), «Բավարիան» (990 մլն), «Լիվերպուլը» (822 մլն), «Միլանը» (800 մլն), «Յուվենտուսը» (656 մլն), «Չելսին» (646 մլն) եւ «Ինտերը» (413 մլն):

# Բուֆոնը կտեղափոխվի «Մանչեսթր Յունայթեդ»



Իտալական «Յուվենտուսի» դարպասապահ Ջանլուիջի Բուֆոնը մրցաշրջանի ավարտից հետո ամենայն հավանականությամբ կտեղափոխվի «Մանչեսթր Յունայթեդ»: Նրա դիմաց անգլիական ակումբն իտալացիներին կտրամադրի պաշտպան Նեմանյա Վիդիչին, ինչպես նաեւ 20 մլն ֆունտ ստեռլինգ կվճարի: Նախկինում «Յուվենտուսի» ղեկավարությունը կտրականապես հերքում էր Բուֆոնի հեռանալու հնարավորությունը, սակայն այժմ դրա հավանականությունը շատ մեծ է:

«Իմ հետագա կարիերայիս վերաբերյալ որոշումը բնավ էլ պայմանավորված չէ այն բանով, թե արդյոք «Յուվենտուսը» չեմպիոնների լիգայի ուղեգիր կնվաճի: Մրցաշրջանի ավարտից հետո այդ հարցը կքննարկվի ակումբի ղեկավարության հետ», նշել է Բուֆոնը:

Իտալիայի հավաքականի դարպասապահով հետաքրքրված են նաեւ Մյունխենի «Բավարիան» ու «Մանչեսթր Սիթին»: Սակայն «Մանչեսթր Յունայթեդի» առաջարկն ամենաշահավետն է: Հարցի դրական լուծման մասին է վկայում նաեւ այն փաստը, որ «Յուվենտուսն» արդեն զբաղվում է նոր դարպասապահի որոնմամբ:

# Իլյումժինովին առաջադրել է ՌԴ շախմատի ֆեդերացիան

Ռուսաստանի շախմատի ֆեդերացիան ՖԻԴԵ-ի ներկայիս նախագահ Կիրսան Իլյումժինովին առաջադրել է սեպտեմբերին կայանալիք նախագահական ընտրություններում այդ պաշտոնի թեկնածու: Իլյումժինովը ՖԻԴԵ-ի նախագահի պաշտոնը զբաղեցնում է 1995-ից: Ընտրություններում Իլյումժինովի գլխավոր հակառակորդը կլինի Անատոլի Կարպովը, որին առաջադրել էր Ֆրանսիայի շախմատի ֆեդերացիան:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

AZG NEW PDF.qxd 22/04/2010 22:21 Page 1



# Ծանուցում

AMERIABANK

## ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ (DD-01)

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ, իր կողմից իրականացվող բանկային գործառույթների շրջանակներում գույքի գնահատման ծառայություններ մատուցող ընկերություն ընտրելու նպատակով, հայտարարում է մրցույթ:

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ն հրավիրում է համապատասխան խորհրդատվական կազմակերպություններին՝ ներկայացնելու իրենց հետաքրքրվածությունը վերոնշյալ ծառայությունների մատուցման առնչությամբ: Շահագրգիռ կազմակերպությունները պետք է բավարարեն հետեւյալ պայմաններին՝

- համապատասխան լիցենզիա (որակավորում)՝ նշված ծառայությունների մատուցման համար,
- նման աշխատանքների կատարման առնվազն 3 (երեք) տարվա փորձառություն,
- գնահատման ծառայություններ իրականացում նաեւ ԼՂՀ տարածքում,
- աշխատակազմի համապատասխան որակավորում ու հմտություններ (ընդ որում՝ առնվազն 5 աշխատակից պետք է ունենա համապատասխան որակավորում)
- ՀՀ բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական կազմակերպությունների հետ համագործակցության փորձ,
- Մասնագիտական պատասխանատվության ապահովագրության առկայություն:

Մրցույթն իրականացվելու է երկու փուլով: Առաջին փուլում կարճ ցուցակում կընդգրկվեն բոլոր այն ընկերությունները, որոնք սույն հրավերի շրջանակներում եւ ստորեւ սահմանված ժամկետում կներկայացնեն իրենց հետաքրքրվածության հայտերը:

Հետաքրքրվածության հայտեր ներկայացրած ընկերություններին կտրամադրվեն համապատասխան հարցաթերթիկներ՝ մրցույթի երկրորդ փուլին մասնակցելու համար կազմակերպության վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն հավաքագրելու եւ բանկի կողմից սահմանված պայմաններին կազմակերպության համապատասխանությունը գնահատելու նպատակով::

«Ամերիաբանկ» ՓԲԸ պահանջներին առավելագույնս բավարարող մասնակցի հետ կկնքվի միավորի գնի վրա հիմնված համագործակցության պայմանագիր բանկի կողմից սահմանված պայմաններով՝ մեկ տարի ժամկետով: Ընտրված մասնակցից պահանջվելու է, որ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում բացվի համապատասխան հաշիվ եւ գրավադրվի ավանդ: Համագործակցության պայմանների մանրամասներին կարող եք ծանոթանալ բանկի ինտերնետային կայքում:

Շահագրգիռ կազմակերպությունները լրացուցիչ տեղեկատվություն կարող են ստանալ ստորեւ ներկայացված հեռախոսահամարներով, աշխատանքային օրերին ժամը 10:00-17:00:

Երկրորդ փուլին առնչվող մրցութային փաստաթղթերը կարող են բեռնվել www.ameriabank.am կայքից: Հայտերի վավերականության ժամկետն է՝ 30 օրացուցային օր, սկսած 2010 թ. ապրիլի 28-ից:

Հետաքրքրության հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված 2010 թ. ապրիլի 28-ը:

Հայտերի թղթային տարբերակները կարող են ներկայացվել հետեւյալ հասցեով.

*«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ*
*ք. Երեւան 0015, Գր. Լուսավորիչ 9*
*Հեռ.՝ (374-10) 56-11-11 Ֆաքս.՝ (374-10) 51-31-33*
*Էլ. փոստ: tenders@ameriabank.am (էլեկտրոնային տարբերակները ուղարկելու համար)*
*Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝*
*Աստղիկ Հակոբյանին (գնումների մասնագետ)*

## Եվրոպական հանձնաժողովը սկսում է Գենդերային հավասարություն խորագրով միջազգային 4- րդ նկարչական մրցույթը

Եվրոպական հանձնաժողովը նախաձեռնում է միջազգային ամենամյա չորրորդ նկարչական մրցույթը՝ Գենդերային հավասարություն խորագրով

**8-10 տարեկան խմբի երեխաները** հրավիրվում են արտահայտելու գենդերային հավասարության իրենց տեսլականը:

Այս տարվա մրցույթի թեման է՝ **«Լինում են, չեն լինում մի աղջիկ ու մի տղա. Նրանք միասին ցանկանում էին ավելի լավը դարձնել աշխարհը...»**

**Մանրամասներ.**

-Ովքե՞ր կարող են մասնակցել. Այս մրցույթը բաց է **8-10 տարեկան խմբի բոլոր երեխաների** համար, ովքեր ՀՀ քաղաքացիներ են, բնակվում եւ դպրոց են հաճախում Հայաստանում:

-Մրցանակ. **1000 եվրոյի** համարժեք մրցանակը տրվելու է յուրաքանչյուր տարածաշրջանից հաղթող ճանաչվող մասնակիցներին*:

-Վերջնաժամկետ. Նկարները հանձնվում են Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության «Նկարչական մրցույթ»-ին, հետեւյալ հասցեով՝ 21 Ֆրիկի փողոց, Երեւան 0002 Հայաստան (մուտքը այցելուների համար Պռոշյան փողոցից): Հանձնման վերջնաժամկետն է ս.թ. մայիսի 14-ը:

- **Ներկայացման ձեւաչափ.** Նկարները պետք է կատարվեն A4 չափսի թղթի մի կողմի վրա: Նույն կողմում կարող է նշվել հնարավոր վերնագիր/բացատրությունը, որը չպետք է գերազանցի 5 տողը: Երեխայի անունը, ազգանունը, տարիքը նշվում են նկարի հետեւում, որտեղ նշվում է նաեւ երեխայի դասարանն ու դպրոցի հասցեն:

Մանրամասն տեղեկությունների համար, կարող եք դիմել Հայաստանում Եվրոպական միության պատվիրակությանը՝ **Delegation-Armenia@ec.europa.eu** էլեկտրոնային փոստով, +374 (10) 54 64 94 հեռախոսահամարով կամ այցելելով հետեւյալ կայքը՝ **http://ec.europa.eu/delegations/armenia:**

** Եվրոպական երկրներ՝ այդ թվում նաեւ Արեւելյան հարեւաններ:*

«Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն ,Ակսոնե ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է ,Անիվե հիմնադրամի կողմից ներկայացված գույքի աճուրդային վաճառքը՝

1.Վարելահող ընդ. մակերեսը՝ 7100քմ: Հասցե՝Արագածոտնի մարզ. գ. Ուշի: Մեկնարկային գինը՝ 1400000 դրամ:

2. Վարելահող ընդ. մակերեսը՝ 4470քմ: Հասցե՝Արագածոտնի մարզ. գ. Ուշի: Մեկն. գինը՝ 800000 դրամ:

3. Պտղատու այգի ընդ. մակերեսը՝ 800քմ: Հասցե՝Արագածոտնի մարզ. գ. Ուշի: Մեկն. գինը՝ 400000 դրամ:

4. Բնակելի տուն եւ տնամերձ հողամաս ընդ. մակերեսը՝ 2600քմ: Հասցե՝Արագածոտնի մարզ. գ. Ուշի: Մեկն. գինը՝ 5000000 դրամ:

5. Բնակելի տուն՝ 280.42մԱ, հողամաս՝ 0.21հա: Հասցե՝Արագածոտնի մարզ. գ. Քուչակ: Մեկն. գինը՝ 10000000 դրամ:

6. Արտադրական շենք կից սարքավորումներով: Հասցե՝Արագածոտնի մարզ. գ. Զովասար: Մեկն գինը՝ 6000000 դրամ:

7. Բնակելի տուն՝ 146.26մԱ, հողը՝ 0.123հա: Հասցե՝Շիրակի մարզ. գ. Իսահակյան: Մեկն գինը՝ 3000000 դրամ:

8. Պահեստ՝ 163.8մԱ, հողը՝ 0.0568հա: Հասցե՝ Շիրակի մարզ. գ. Շիրակավան: Մեկն գինը՝ 1200000 դրամ:

9. Ձկնաբուծական տնտեսություն՝ հող՝ 2.0հա, լիճ՝ 8686մԱ, անասնաշենք՝ 71.9մԱ: Հասցե՝Լոռու մարզ. գ. Լեռնապատ: Մեկն գինը՝ 7500000 դրամ:

10. Բնակելի տուն՝ 207.5մԱ, հողը՝ 0.0338հա: Հասցե՝Լոռու մարզ. ք. Վանաձոր, Տպագրիչների 18: Մեկն գինը՝ 5000000 դրամ:

11. Բենզալցակայան՝ 117.43մԱ, հողը՝ 0.06հա: Հասցե՝ Լոռու մարզ, Հաղպատ, Թբիլիսյան խճ.: Մեկն գինը՝ 1200000 դրամ:

12. Հեղուկ վառել. լցակայական՝ հողը՝0.006հա: Հասցե՝ Լոռու մարզ, ք. Ալավերդի, Երեւանյան խճ.: Մեկն գինը՝ 1200000 դրամ:

Մեկնարկային գները սակարկելի են: Աճուրդի փուլերը՝ դասական եղանակով ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 24.05.2010թ-ից մինչեւ 30.12.2010թ. յուրաքանչյուր աշխատանքային օր ժ.11.00-ից - 17.00-ն: Լոտերը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեներում յուրաքանչյուր օր ժամը 11.00-ից 20.00-ն: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու համար զանգահարել՝ (010) 56-45-13 կամ այցելել **www.akson.am**:

**www.**
**azg.am**

## ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ԱՐՄԵՆԱԿԱՆ-ՌԱԿ, Թ. Մ. ՄԻՈՒԹՅՈՒՆ

**Համերգ՝ նվիրված Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին**

**ՌԵՔՎԻԵՄ**
**ՄՈՑԱՐՏ**

**Վաստակավոր կոլեկտիվ Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբ**
Գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր **Էդուարդ Թոփչյան**
Հայաստանի կամերային երգչախումբ
Գեղարվեստական ղեկավար եւ խմբավար **Ռոբերտ Մլքեյան**
**«Հովեր» կամերային երգչախումբ**
Գեղարվեստական ղեկավար եւ խմբավար **Սոնա Հովհաննիսյան**
**Մեներգիչներ**
**Սյուզաննա Մելքոնյան, սոպրանո**
**Նարինե Անանիկյան, մեցցո սոպրանո**
**Պերճ Քարազյան, տենոր**
**Սուրեն Շահիջանյան, բաս (Ֆրանսիա)**
Դիրիժոր՝ **Էդուարդ Թոփչյան**
Համերգը տեղի կունենա

**ապրիլի 23-ին, ժամը 19.00-ին**,

Արամ Խաչատրյան համերգասրահում:

Հայոց վշտի այդ օրը միասին հարգենք 20-րդ դարի առաջին Ցեղասպանության անմեղ նահատակների հիշատակը:

*ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*
*ԱՐՄԵՆԱԿԱՆ-ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ*
*ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԵՔԵՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ*

***Մուտքն ազատ է***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ
### Մրցույթի ծածկագիրը՝ ԼՂ/Ջ-1/10

Պատվիրատուն՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամը /ք. Երեւան, Կառավարական 3-րդ շենք/, հայտարարում է բաց մրցույթ, որն անցկացվելու է մեկ փուլով:

Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել **ԼՂՀ, Շուշի քաղաքի I-ին գոտու ջրամատակարարման ցանցի կառուցման աշխատանքների իրականացման պայմանագիր**:

Գնման առարկա է հանդիսանալու ԼՂՀ, Շուշի քաղաքի I-ին գոտու ջրամատակարարման ցանցի կառուցման աշխատանքները:

Մրցույթի հրավեր ստանալու համար անհրաժեշտ է փոխանցել 15.000 դրամ «Հայաստան» համահայկական հիմնադրամի «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում ունեցած N 1930001437120100 հաշվեհամարին եւ դիմել «Հայաստան» համահայկական հիմնադրամ՝ ս.թ. ապրիլի 26-ից մինչեւ ս. թ. մայիսի 20-ը, ժամը 10.00-ից մինչեւ 18.00-ն: (ք. Երեւան, Կառավարական թիվ 3 շենք, 3 սենյակ, Սոս Գեւորգյանին, հեռ. 52-09-40 (ներքին 103)): «Հայաստան» համահայկական հիմնադրամը պարտավորվում է պահանջվող վճարի անդորրագիրը ստանալուց հետո, երկու աշխատանքային օրվա ընթացքում, մրցույթի հրավերը տրամադրել պահանջ ներկայացրած անձին:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ մրցույթի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն մրցույթի հրավերով նախատեսված փաստաթղթերը: Մրցույթի հայտերը՝ կազմված հայերեն, անհրաժեշտ է ներկայացնել վերոհիշյալ հասցեով՝ մինչեւ ս. թ. մայիսի 24-ը, ժ. 11.00-ն:

*«Հայաստան» համահայկական հիմնադրամ*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ
### Մրցույթի ծածկագիրը՝ ԼՂ/Մ-1/10

Պատվիրատուն՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամը /ք. Երեւան, Կառավարական 3-րդ շենք/, հայտարարում է բաց մրցույթ, որն անցկացվելու է մեկ փուլով:

Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել **ԼՂՀ, Մարտունու շրջանի Ճարտար գյուղում 80 տեղանոց մանկապարտեզի կառուցման աշխատանքների իրականացման պայմանագիր:**

Գնման առարկա է հանդիսանալու ԼՂՀ, Մարտունու շրջանի Ճարտար գյուղում 80 տեղանոց մանկապարտեզի կառուցման աշխատանքները:

Մրցույթի հրավեր ստանալու համար անհրաժեշտ է փոխանցել 15.000 դրամ «Հայաստան» համահայկական հիմնադրամի «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում ունեցած N 1930001437120100 հաշվեհամարին եւ դիմել «Հայաստան» համահայկական հիմնադրամ՝ ս.թ. ապրիլի 26-ից մինչեւ ս. թ. մայիսի 20-ը, ժամը 10.00-ից մինչեւ 18.00-ն: (ք. Երեւան, Կառավարական թիվ 3 շենք, 3 սենյակ, Սոս Գեւորգյանին, հեռ. 52-09-40 (ներքին 103)): «Հայաստան» համահայկական հիմնադրամը պարտավորվում է պահանջվող վճարի անդորրագիրը ստանալուց հետո, երկու աշխատանքային օրվա ընթացքում, մրցույթի հրավերը տրամադրել պահանջ ներկայացրած անձին:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ մրցույթի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն մրցույթի հրավերով նախատեսված փաստաթղթերը: Մրցույթի հայտերը՝ կազմված հայերեն, անհրաժեշտ է ներկայացնել վերոհիշյալ հասցեով՝ մինչեւ ս. թ. մայիսի 24-ը, ժ. 11.00-ն:

*«Հայաստան» համահայկական հիմնադրամ*

***«Էկոնոմիկա եւ Իրավունք» ամսագիր***

Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից

♦ *Օրենսդրական նորություններ* ♦ *Պարզաբանումներ* ♦ *Խորհրդատվություն*

***«Էկոնոմիկա եւ Իրավունք» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար***

**Բաժանորդագրվելու համար զանգահարեք 54-24-81, 54-74-81**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 22.04.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: